ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾՐԱԳԻՐ 2008-2010թթ. ՆԱԽԱԳԾԵՐԻ/ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ 2009թ. ԹԱՐՄԱՑՈՒՄ- ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ – ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ – ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 8

ԳԼՈՒԽ 1 – ՍԵԿՏՈՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 10

1. ԿՈՄԵՆԻՈՒՍ – ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 10

1.1 Շարժականություն և մասնակցություն 12

1.2 Բազմակողմանի նախագծեր 12

1.2.1 Առաջնայնություն 1. Սովորելու և սովորել սովորելու դրդապատճառների զարգացում 12

1.2.2 Առաջնայնություն 2. Սովորելու և դասավանդման մոտեցման ձևերի զարգացում՝ աջակցելու առանցքային հմտություններին 13

1.2.3 Առաջնայնություն 3. Դպրոցի տնօրինումը 13

1.2.4 Առաջնայնություն 4. Լեզուների ուսանում և լեզվական բազմազանություն 14

1.2.5 Առաջնայնություն 5. Գրագիտության զարգացում 14

1.2.6 Առաջնայնություն 6. Թվայնացված կրթական միջոցներ և ծառայություններ 14

1.3 Ցանցային աշխատանքներ 15

1.3.1 Առաջնայնություն 1. Նախատարրական և վաղ կրթության ապահովման զարգացում 15

1.3.2 Առաջնայնություն 2. Դպրոցի տնօրինումը 15

1.3.3 Առաջնայնություն 3. Աջակցություն ձեռնարկչությանը և աշխատաշուկայի հետ կապերին .. 16

1.3.4 Առաջնայնություն 4. Թվայնացված կրթական միջոցներ և ծառայություններ 16

1.3.5 Առաջնայնություն 5. Կրթությունը և գիտությունն առավել գրավիչ դարձնել 16

1.3.6 Առաջնայնություն 6. Հատուկ պահանջների կրթության /SEN զարգացում՝ ընդգրկելով բոլոր երիտասարդներին՝ հատկապես սահմանափակ կարողություններ ունեցողներին 17

2. ԷՐԱՍՄՈՒՍ – ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ 18

2.1 Շարժականություն 20

2.2 Բազմակողմանի ծրագրեր 21

2.2.1 Ուսումնական ծրագրի զարգացման (CD) նախագծեր 21

2.2.2 Ծրագրեր, որոնք սևեռված են բուհերի և ձեռնարկությունների միջև համագործակցության վրա 22

2.2.3 Նախագծեր, որոնք աջակցում են բուհերի օրակարգի արդիականացմանը ... 22
2.2.4 Վիրտուալ ուսումնական հաստատությունների նախագծեր ... 23
2.3 Թեմատիկ ցանցային աշխատանքներ ... 23
2.3.1 Ակադեմիական ցանցային աշխատանքներ ... 24
2.3.2 Կառուցվածքային ցանցային աշխատանքներ ... 25
3. ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ – ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ... 26
3.1 Շարժականություն և մասնակցություն ... 27
3.2 Բազմակողմանի նախագծեր ... 28
Լեոնարդո դա Վինչի ծրագրի այս բաժնում ընդգրկված են 2 տեսակ նախագծեր. ... 28
3.2.1. Առաջնայնություն 1. Կարողությունների և որակավորման ճանաչում և թափանցիկություն . 28
3.2.2. Առաջնայնություն 2. ՄԿՈՒ համակարգերի և փորձի որակի և գրավչության զարգացում ... 29
3.2.3. Առաջնայնություն 3. ՄԿՈՒ ուսուցիչների, թրեյներների և կրկնուսույցների հմտությունների և կարողությունների զարգացում ... 29
3.2.4. Առաջնայնություն 4. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտությունների զարգացում ... 30
3.2.5. Առաջնայնություն 5. Ռիսկային խմբերի կարողությունների մակարդակի բարձրացում ... 30
3.3 Ցանցային աշխատանքներ ... 31
3.3.1 ECVET ցանցային աշխատանքներ ... 31
3.3.2 Շահագրգիռ կողմերի ցանցային աշխատանքներ ... 31
4. ԳՐՈՒՆԴՏՎԻԳ – ՄԵԾԱՀԱՍԿԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐ ... 32
4.1 Շարժականություն և մասնակցություն ... 33
4.2 Բազմակողմանի ծրագրեր ... 34
4.2.1. Առաջնայնություն 1. Առանցքային հմտություններ ... 34
4.2.2. Առաջնայնություն 2. Մեծահասակների կրթության որակի բարձրացում ... 34
4.2.3. Առաջնայնություն 3. Մեծահասակների կրթության գրավչության և մատչելիության բարձրացում ... 35
4.2.4. Առաջնայնություն 4. Մեծահասակների կրթության գրավչության և մատչելիության բարձրացում ... 35
4.2.5. Առաջնայնություն 5. Սահմանափակ հնարավորություններ և ֆիզիկական խնդիրներ ունեցող քաղաքացիների և միգրանտների համար մեծահասակների կրթության խթանում ... 36
4.2.6. Առաջնայնություն 6. Հետագա կյանքում ուսանում և ուսուցանում; Միջսերնդային և ընտանեկան կրթություն ... 36
4.3 Ցանցային աշխատանքներ ... 36
4.3.1 Առաջնայնություն 1. Մեծահասակների կրթության մեջ լեզուների ուսանում ... 36
4.3.2 Առաջնայնություն 2. Մեծահասակների կրթության մեջ ակադեմիական ցանցային աշխատանքներ ... 37

4.3.3 Առաջնայնություն 3. Շահագրգիռ կողմերի ցանցային աշխատանքներ մեծահասակների կրթության ոլորտում 38

4.3.4 Առաջնայնություն 4. Վավերացում և սերտիֆիկացում 38

ԳԼՈՒԽ 2 – ԲԱԶՄԱՃՅՈՒՂ ԾՐԱԳԻՐ 39

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 39

1.1 Շարժականություն (ուսումնական այցեր) 39

1.2 Դասընթացներ և համեմատական հետազոտություն 40

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 2. ԼԵԶՈՒՆԵՐ 42

2.1 Բազմակողմանի նախագծեր 42

2.2 Ցանցային աշխատանքներ 43

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 3. ICT 44

3.1 Բազմակողմանի նախագծեր 44

3.2 Ցանցային աշխատանքներ 46

4 ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 4. – ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ 48

4.1 Բազմակողմանի նախագծեր 48

4.2 Դասընթացներ և հանձնարարական նյութեր 48

ԳԼՈՒԽ 3. – ԺԱՆ ՄՈՆՆԵ ԾՐԱԳԻՐ 50

ԺԱՆ ՄՈՆՆԵ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 50

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Այս փատաթուղթը Համայնքների «Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ծրագրի 2008-2010թթ. համար Ընդհանուր ժողովի գերակայությունների թարմացումն է: Այն սահմանում է ծրագրի տարբեր գործողություններն իրականացանելու շրջանակներում բոլոր գերակայությունները, որոնց պետք է համապատասխանեն ներկայացվող առաջարկները: Թեև 2008թ. Ժողովում հրապարակված գերակայությունների մեծ մասը չի փոփոխվել, այդուհանդերձ, ներկայացվում են որոշ փոփոխություններ, որպեսզի ցույց տրվեն քաղաքականության մշակման գործընթացի զարգացումներն ու ներկայացվեն նոր ծրագրային գործողությունները:

Այս փաստաթղթում ներկայացված գերակայություններն այն հարցերն են, որոնք կենտրոնական տեղ են զբաղեցնում եվրոպական մակարդակով կրթության և ուսուցման քաղականության զարգացման համար: Եթե ներկայացվեն հավասար որակ ունեցող առաջարկներ, ապա ֆինանսավորման համար առավել մեծ հնարավորություն կունենան այն առաջարկները, որոնք սևեռված են նշված գերակայությունների վրա:

Ընդհանուր ժողովի փաստաթուղթը պետք է ուսումնասիրել հետևյալ փաստաթղթերի հետ միասին.

- «Եվրոպական Խորհրդարանի և Խորհուրդի որոշում», որով հիմնվել է «Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ծրագիր 2007-2013» :
- «Ծրագրի ուղեցույց», որում նշված են գործողությունների նկարագիրը և ֆինանսական և վարչական միջոցառումները:

Դիմողների ուշադրությունը պետք է հրավիրել այն հանգամանքի վրա, որ «Ծրագրի ուղեցույցը» պարունակում է 2009թ. Կոմենիուս և Գրուդտվիգ սեկտորային ծրագրերի շրջանակներում ձեռնարկվելիք մի շարք նոր գործողություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ – ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ծրագրի» հիմնական և ընդհանուր գերակայությունն այն է, որ կրթությունն և ուսուցումն առավելագույնս նպաստեն Լիսաբոնյան նպատակին հասնելու գործին, այն է՝ ԵՄ-ն դարձնել գիտելիքի վրա հիմնված ամենամրցունակ տնտեսությունը, որը կունենա կայուն տնտեսական աճ, ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր և առավել ընդլայնված սոցիալական համախբվածություն: Ծրագրի յուրաքանչյուր բաղկացուցիչ մաս առաջնայնությունը կտա այն գործողությանը, որի նպատակն է բարձրացնել հմտությունների մակարդակը, աջակցել ողջ կյանքի ընթացում ուսումնառության ռազմավարության զարգացմանը և իրականացմանը, ինչպես նաև խթանել նորարարությունը և ստեղծագործական կարողությունը:

Այս համատեքստում 2009թ. գործողությունների գերակայությունների ոլորտները հետևյալն են.

- Աջակցել 2010թ. Կրթության և Ուսուցման ծրագրի իրականացմանը, որի նպատակն է բարելավել Եվրոպայում կրթության և ուսուցման համակարգերի որակը, մատչելիությունը և թափանցիկությունը, մասնավորապես՝ խթանելով ողջ կյանքի ընթացքում ուսումնառության և ուսուցման բոլոր ձևերի և մակարդակների միջև կապը՝ սկսած վաղ հասակից, ինչպես նաև զարգացնելով ուսումնառության առավել դյուրին ուղիները, օրինակ՝ Եվրոպական որակավորման համակարգի իրականացման միջոցով, նաև՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգերի և ողջ կյանքի ընթացքում ուղղորդման միջոցով:
- Ուժեղացնել Լիսաբոնյան գործընթացի շրջանակներում կրթության և ուսուցման դերը ինչպես եվրոպական, այնպես էլ ազգային մակարդակներում՝ խթանելու համար ոչ միայն մրցունակությունը, այլ նաև կայուն տնտեսական աճն ու սոցիալական համախմբվածությունը:
- Խրախուսել ստեղծագործական կարողությունը և նորարարությունը կրթության և ուսուցման բոլոր մակարդակներում, որպեսզի հաջողությամբ պսակվի Ստեղծարարության և նորարարության տարի 2009-ը:
- Կյանքի կոչել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ծրագրի ռազմավարությունը, որի նպատակն է հասնել առավել մեծ արդյունավետության և անաչառության[1], մասնավորապես՝ ձեռնարկելով այնպիսի գործողություններ,

[1] 2008թ. Խորհրդի/Հանձնաժողովի առաջադիմության միացյալ զեկույց 2010թ. Կրթության և ուսումնառության ծրագրի աշխատանքային պլանի վերաբերյալ՝ “Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության տարածում գիտելիքի, ստեղծարարության և նորարության համար”, http://ec.europa.eu/education/policies/2010/natreport08/council_en.pdf;

որոնց արդյունքում կկրճատվի այն մարդկանց թիվը, ովքեր շուտ են ավարտել դպրոցը կամ ունեն հիմնական գիտելիքների ցածր մակարդակ, նպաստելու համար միգրանտների տնտեսական և սոցիալական ներգրավվածությանը, գործողություններ, որոնք ուղղված են սոցիալ-տնտեսական թերությունների վերացմանը, կաջակցեն առանցքային հմտությունների հնարավորինս շուտ ձեռքբերմանը և կայուն ֆինանսավորմանը, և վերջապես, կամրապնդեն ծրագրային քաղաքականության և պրակտիկայի համար գիտելիքների հիմքը:

- Զարգացնել ուսուցումն ապահովողների, մասնավորապես՝ ուսուցիչների և դասավանդողների կրթական և դասավանդման մակարդակը:
- Արդիականացնել բարձրագույն կրթության համակարգերը՝ դարձնելով դրանք առավել համաձայնեցված և հասարակական պահանջներին առավել համապատասխան: Արդիականացումն անհրաժեշտ է, որպեսզի եվրոպական համալսարանները կարողանան ելակետային դեր խաղալ գիտելիքների Եվրոպայում գլոբալացման մարտահրավերներին դիմակայելիս, ինչպես նաև զարգացնելու եվրոպացիների գիտելիքները, հմտություններն ու կարողությունները (KSC/ԳՀՈ) և դարձնելու Եվրոպան նորարար ու մրցունակ: Արդիականացումը եվրոպական համալսարաններում հնարավորություն է ընձեռելու խաղալու իրենց դերը Գիտելիքների Եվրոպայում և էական ներդրում կատարելու աճի և աշխատանքի Լիսաբոնյան ռազմավարության մեջ:
- Բարձրացնել մասնագիտական կրթության և ուսուցման որակը և գրավչությունը՝ ազգային մակարդակում իրականացնելով Կոպենհագենյան գործընթացի գերակայությունները, օրինակ՝ փորձարկելով առաջարկված կրեդիտների փոխադրման և կուտակման եվրոպական համակարգը, որը նախատեսված է Մասնագիտական կրթության և ուսուցման (VET/ՄԿՈ) համար:
- Բարձրացնել կրթությանը մեծահասկանների մասնակցության ցածր մակարդակը, մասնավորապես՝ տարեց աշխատողների և գիտելիքների ցածր մակարդակ ունեցողների համար, որպեսզի կրճատվեն աշխատանքի ընդունման ճանապարհին հանդիպող խոչընդոտները, և բարձրանա կտրուկ փոփոխվող կենսական և աշխատանքային միջավայրին հարմարվելու կարողությունը:
- Խթանել քաղաքացիների շարժականությունը, մասնավորապես՝ որակի առումով՝ շարժականության մասին Հանձնարարականի[2] իրականացմամբ և Եվրոպական պորտֆոլիոյի միջոցով:
- Ուժեղացնել կայուն զարգացումը՝ ներառյալ էներգիայի և կլիմայի փոփոխությանն առնչվող խնդիրների հաղթահարումը, ինչն ապահովվելու է կրթության և ուսուցման բոլոր սեկտորներում համապատասխան գործողությունների իրականացման միջոցով:

Կրթության և ուսուցման ոլորտում հիմնական քաղաքականության նախաձեռնությունների ժողովածու՝ սկսած 2000թ.,
http://ec.europa.eu/education/policies/2010/comp_en.html .

[2] Recommendation 2006/961/EC of 18 December 2006, OJ L 394 of 30.12.2006, http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2006:394:0005:0009:EN:PDF

Ի հավելումն «Կրթություն և ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի («Տարածելով ուսումնառությունը ողջ կյանքի ընթացքում գիտելիքի, ստեղծարարության և նորարարության համար») իրականացման վերաբերյալ Խորհրդի և Հանձնաժողովի 2008թ. Առաջընթացի միացյալ զեկույցի՝ այս հարցերի վերաբերյալ փաստաթղթերի լիարժեք շարքը կարելի է գտնել DG EAC-ի հիմնական քաղաքականության նախաձեռնությունների և արդյունքների ամփոփագրում՝ սկսած 2000թ:[3]

Հատուկ առաջնայնություններ չկան սեկտորային ծրագրերին և Հիմնական գործունեություն 2-ին (Լեզուներ) ուղեկցող միջոցառումների համար:

Հարկ է նշել, որ բոլոր ծրագրերում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում արդյունքների պարբերաբար տարածմանը և մշակմանը՝ նախագծային և ծրագրային մակարդակում: Ուստի, բոլոր ծրագրային առաջարկները պետք է ունենան արդյունքների տարածման և մշակման հստակ պլան:

Նախորդ տարիներին ֆինանսավորում ստացած և այժմ համատեղ ֆինանսավորման համար ցանցային նոր աշխատանքային ծրագրով առաջարկները Հանձնաժողովը դիտարկելու է նշված ցանցային աշխատանքների արդեն իսկ փաստարկված ներկայացման լույսի ներքո:

[3] http://ec.europa.eu/education/policies/2010/doc/compendium05_en.pdf

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ – ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ծրագրի ընդհանուր և առանձնահատուկ նպատակներն ամբողջությամբ շարադրված են ծրագրի մասին Որոշման Հոդված 1-ում և տեղեկատվության կարգով ներկայացվում են ստորև: Դրանք համապատասխանում են ծրագրի բոլոր հատվածներին, համալրված են յուրաքանչյուր ենթածրագրի համար առանձնահատուկ և գործառնական նպատակներով, որոնք ևս մեկ անգամ շարադրված են առաջարկների այս հրատարակության համապատասխան գլուխներում:

Ծրագրի հիմնական նպատակը, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 1.2-ում, հետևյալն է. ողջ կյանքի ընթացքում ուսումնառության միջոցով նպաստել ԵՄ-ի զարգացմանը՝ որպես առաջադեմ գիտելիքի վրա հիմնված հասարակության, որն ունի կայուն տնտեսական զարգացում, ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր և առավել ընդլայնված սոցիալական համախմբվածություն, և որն ապահովում է գալիք սերունդների համար շրջակա միջավայրի լավ պաշտպանություն: Մասնավորապես, այն նպատակ ունի ուժեղացնել ԵՄ տարածքում կրթական և ուսուցման համակարգերի միջև փորձի փոխանակումը, համագործակցությունը և շարժականությունն այնպես, որ դրանք դառնան աշխարհում որակի չափանիշ:

Ըստ ծրագրի մասին Որոշման Հոդված 1.3-ի՝ առանձնահատուկ նպատակները հետևյալն են.

(ա) նպաստել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության զարգացմանը և խթանել բարձր կատարողականությունը, նորարությունը և եվրոպական ծավալները այս ոլորտի համակարգերում և փորձում;
(բ) աջակցել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ծրագրի իրագործման համար եվրոպական տարածքի ապահովմանը;
(գ) օգնել բարելավելու ԵՄ Անդամ-երկրներում առկա ողջ կյանքի ընթացքում ուսումնառության հնարավորությունների որակը, գրավչությունը և մատչելիությունը;
(դ) ուժեղացնել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ներդրումը սոցիալական համախմբվածության, ակտիվ քաղաքացիության, միջմշակութային երկխոսության, սեռերի միջև հավասարության և անձնական զարգացման ոլորտներում;
(ե) օգնել խթանելու ստեղծարարությունը, մրցունակությունը, աշխատունակությունը և ձեռնարկչության ոգու աճը;
(զ) նպաստել, որպեսզի աճի ողջ կյանքի ընթացքում ուսումնառությանը ցանկացած տարիքի մարդկանց մասնակցությունը՝ այդ թվում նաև հատուկ կարիք ունեցողները և

սահմանափակ հնարավորությունների տեր խմբերը՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական հիմքերից;
(է) խթանել լեզուների ուսանումը և լեզվական տարբերությունները;
(ը) աջակցել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համար նորարարական ICT-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և պրակտիկայի զարգացմանը;
(թ) ուժեղացնել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության դերը եվրոպական քաղաքացիություն ստեղծելու գործում, որի հիմքում ընկած կլինի մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը հասկանալն ու վերջիններիս հանդեպ հարգանքը, ինչպես նաև ծրագրի իրականացման դերը այլ ազգերի ու մշակույթների հանդեպ հանդուրժողականությունն ու հարգանքը խրախուսելու գործում;
(ժ) խթանել Եվրոպայում կրթության և ուսուցման բոլոր սեկտորներում որակի հավաստման համար համագործակցությունը;
(ի) խրախուսել արդյունքների, նորարար արդյունքների և գործընթացների լավագույնս կիրառումը, ինչպես նաև ապահովել «Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ծրագրում» ընդգրկված բոլոր ոլորտներում լավագույն փորձի փոխանակումը՝ կրթության և ուսուցման որակի բարձրացման նպատակով:

ԳԼՈՒԽ 1 – ՍԵԿՏՈՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

1. ԿՈՄԵՆԻՈՒՍ – ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. Քաղաքականության համառոտագիր

ԵՄ անդամ-երկրները կրթության զարգացման համար սահմանել են յուրահատուկ նպատակներ, և դրանցում հինգից չորսը վերաբերվում է դպրոցական կրթությանը:[4] Ավելին է հարկավոր անել: Որևէ առաջընթաց չկա ընթերցելու գրագիտության ոլորտում, ժամանակից շուտ դպրոցն ավարտելու և բարձր դասարանների միջնակարգ ուսուցումն ավարտելու խնդիրների բարելվման տեմպերը շատ դանդաղ են: Թեև մաթեմատիկայի, գիտությունների և տեխնոլոգիաների ոլորտում ուսանողների թիվը հասել է նախատեսվածին, այդուհանդերձ, ոչ հաշվարկային դասընթացների մասնակիցների թիվը նվազում է, և իգական սեռի ներկայացուցիչների մասնակցությունը ևս դեռ շատ ցածր է:

Հետևաբար, դպրոցական կրթության վերաբերյալ 2006թ. դեկտեմբերի Հանձնարարականը սահմանում է ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համար առանցքային հմտություններ, որոնք երիտասարդները պետք է զարգացնեն նախքան իրենց նախնական կարողության և ուսուցման ավարտը:[5] Սրանք ներառում են ոչ միայն առանցքային հմտություններ (մայրենի լեզու, օտար լեզու, մաթեմատիկա և գիտություն ու թվային կարողություններ), այլ նաև առավել լայն կարողություններ (սովորել սովորել, սոցիալական և քաղաքացիական կարողություններ, նախաձեռնության և ձեռնարկչության զարգացում, մշակութային տեղեկացվածություն և արտահայտչություն),- որոնցից շատերը հաճախ արտահայտվում են որպես ազգային ծրագրի խաչաձև ուսումնական ծրագրային նպատակներ, ուստի պահանջում են կենտրոնանալ ամբողջ դպրոցի զարգացման հարցի վրա:

---

[4] Council Conclusions of May 2003 on Reference levels of European average performance in education and training (benchmarks) and
Annual Progress Report 2007, to be found under "News" on http://europa.eu.int/comm/dgs/education_culture/

[5] Հանձնարարական 2006/962/EC Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 18 դեկտեմբեր 2006 ողջ կյանքի ընթացքում ուսումնառության առանցքային հմտությունների վերաբերյալ, OJ L 394/10, 30.12.2006. Ութ առանցքային հմտություններն են. Հաղորդակցություն մայրենի լեզվով; Հաղորդակցություն օտար լեզուներով; Մաթեմատիկական կարողություններ և առանցքային հմտություններ գիտության և տեխնիկայի ոլորտում; Թվային տեխնիկայի կարողություններ; Սովորել սովորել; Սոցիալական և քաղաքացիական կարողություններ; Նախաձեռնության և ձեռնարկչության ձիրք; Մշակութային տեղեկացվածություն և արտահայտչություն:

2007թ. Հանձնաժողովը կազմակերպեց դպրոցական կրթության հանրային խորհրդատվություն, որպեսզի պարզի ներկա և ապագա մարտահրավերները:[6] Հանձնաժողովը նաև ընդունեց ուսուցիչների կրթության որակի բարձրացման Հաղորդագրություն:[7] Գնալով նաև մեծանում է տեղեկացվածությունն այն մասին, թե ինչ կարևորություն ունի նախադպրոցական և տարրական կրթության ապահովումը ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համար՝ որպես ելակետ՝ կրթության և ուսուցման բոլոր ենթամակարդակներում հավասարությունն ապահովելու համար:

Ուստի, հետևյալ աաջնայնություններն արտահայտում են այն անհրաժեշտությունը, որ առանցքային հմտությունները պետք է զարգացվեն բոլորի կողմից՝ հանուն գիտելիքների հասարակության, և որ անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել նրանց, ովքեր ունեն կրթության համար որևէ սահմանափակում կամ անբարենպաստ վիճակ: Քանի որ շատ մարտահրավերներ պահանջում են կազմակերպչական զարգացում, ուստի ուսուցիչների կրթությանը և դպրոցների կառավարման զարգացմանը առանձնահատուկ կարևորություն է տրվում:

<u>Ներածություն. Կոմենիուսի առանձնահատուկ և գործառնական նպատակները</u>

Կոմենիուս ծրագրի առանձնահատուկ նպատանկները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 17.1-ում, հետևյալն են.

(ա) զարգացնել երիտասարդների և դասավանդող աշխատակազմի մոտ եվրոպական մշակույթների ու լեզուների բազմազանության, դրանց արժեքի հասկացությունն ու իմացությունը;
(բ) օգնել, որպեսզի երիտասարդները ստանան այն հիմնական կենսական հմտություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են նրանց անձնական զարգացման, հետագայում աշխատանքի ընդունման և ակտիվ քաղաքացիության համար:

Կոմենիուս ծրագրի գործառնական նպատանկները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 17.1-ում, հետևյալն են.

(ա) ԵՄ տարբեր անդամ-երկրներում զարգացնել որակը և բարձրացնել շարժականության ծավալները՝ ընդգրկելով աշակերտներին և դասավանդող աշխատակազմին;
(բ) տարբեր անդամ-երկրների դպրոցների միջև զարգացնել որակը և մեծացնել համագործակցության ծավալներն այնպես, որ ծրագրի իրականացման ընթացքում միասնական կրթական գործողություններում ընդգրկված լինի անվազան 3 մլն աշակերտ;

---

[6] http://ec.europa.eu/education/school21/index_en.html

[7] http://ec.europa.eu/education/com392_en.pdf

(գ) խրախուսել ժամանակակից օտար լեզուների իմացությունը;
(դ) աջակցել նորարարական ICT-ի վրա հիմնված ծավալների, ծառայությունների, մանկավարժության և պրակտիկայի զարգացմանը ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համար;
(ե) բարձրացնել ուսուցիչների վերապատրաստման եվրոպական ծավալները և որակը;
(զ) աջակցել մանկավարժական մոտեցումների և դպրոցների ղեկավարման բարելավմանը:

Կոմենիուս ծրագրի գործողությունների առաջնայնությունները

1.1 Շարժականություն և մասնակցություն

Այս գործողությունների համար առանձնահատուկ թեմատիկ առաջնայնություններ չկան:

1.2 Բազմակողմանի նախագծեր

Կոմենիուս ծրագրի բոլոր նախագծերը վերաբերվում են նորարաության զարգացմանը և փոխադրմանը, որի նպատակն է զարգացնել ուսուցիչների կրթության մակարդակը և շարունակել դասավանդող անձնակազմի մասնագիտական զարգացումը, ինչպես նաև նրանց հատկացնել նյութեր, մեթոդաբանություն և այլ աջակցություն: Առաջնայնությունը տրվելու է հետևյալ թեմաներին.

1.2.1 Առաջնայնություն 1. Սովորելու և սովորել սովորելու դրդապատճառների զարգացում

Գիտելիքների վրա հիմնված հասարակության համար կենսական նշանակություն ունի ոչ միայն սովորելու հնարավորությունների մատչելիության խթանումը, այլև յուրաքանչյուր անհատի մոտ դպրոցում և ողջ կյանքի ընթացքում սովորելու դրդապատճառների զարգացումը:

➢ Նախագծերը պետք է իրենց ուշադրությունը սևեռեն նախանշված նյութերի, նոր մանկավարժական մեթոդների և ռազմավարության զարգացման, փորձարկման և իրականացման վրա՝

- մեծացնելու սովորողների ձգտումները և ուսումը դարձնելու առավել գրավիչ, հատկապես միգրանտների և սոցիալ-տնտեսական սահմանափակ պայմաններ ունեցողների համար;
- ուժեղացնելու սովորողների սովորելու կարողությունները;
- ամրապնդելու դպրոցական կրթության և աշխատաշուկայի միջև կապերը;

- ամրապնդելու միջմշակութային կրթությունը և վերջինիս նպաստը սոցիալական ինտեգրացիային;
- օգնելու հոգալ գործուղման մեջ գտնվողների երեխաների և միգրանտ աշխատողների կարիքները;
- ընդլայնելու մասնակցությունը կրթական հնարավորություններին՝ մարզական գործունեության միջոցով:

1.2.2 Առաջնայնություն 2. Սովորելու և դասավանդման մոտեցման ձևերի զարգացում՝ աջակցելու առանցքային հմտություններին

Հիմնականում նախնական կրթության նպատակն է սովորողներին ապահովել առանցքային հմտություններով (տես առանցքային հմտություններով 4-8)[8], որոնք պահանջում են համաձայնեցված և ուղղորդված մոտեցում դպրոցի ընդարձակ անձնակազմի կողմից:

➢ Նախագծերը պետք է իրենց ուշադրությունը սևեռեն դասընթացների, մանկավարժական նյութերի ու մեթոդների, ինչպես նաև նորարարական ռազմավարությունների զագացման, փորձարկման և իրականացման վրա (օր.՝ թիմային ուսուցման):

1.2.3 Առաջնայնություն 3. Դպրոցի տնօրինումը

Քանի որ դպրոցական միջավայրը գնալով դառնում է առավել կոմպլեքսային, ուստի դպրոցի ղեկավարների, այսինքն՝ տնօրենների դերը և կարողություններն առավել վճռական դեր են խաղում դպրոցի հաջողությունների հարցում, բայց նրանք հազվադեպ են մասնակցում ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:
դպրոցի ընդարձակ անձնակազմի կողմից

➢ Նախագծերը պետք է կենտրոնանան ղեկավարման կարողությունների և դպրոցի ղեկավարության պրակտիկ ուսուցման ապահովման և դպրոցներում գնահատման կուլտուրայի զարգացմանը աջակցելու վերաբերյալ մոտեցումների զարգացմանը, թեստավորմանը և իրականացմանը:

---

[8] Հանձնարարական 2006/962/EC Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 18 դեկտեմբեր 2006 ողջ կյանքի ընթացքում ուսումնառության առանցքային հմտություններների վերաբերյալ, OJ L 394/10, 30.12.2006. Ութ առանցքային հմտություններ են. 1.Հաղորդակցություն մայրենի լեզվով; 2.Հաղորդակցություն օտար լեզուներով; 3.Մաթեմատիկական կարողություններ և առանցքային հմտություններ գիտության և տեխնիկայի ոլորտում; 4.Թվային տեխնիկայի կարողություններ; 5.Սովորել սովորել; 6.Սոցիալական և քաղաքացիական կարողություններ; 7.Նախաձեռնության և ձեռնարկչության ձիրք; 8.Մշակութային տեղեկացվածություն և արտահայտչություն

1.2.4 Առաջնայնություն 4. Լեզուների ուսանում և լեզվական բազմազանություն

Նախագծերը պետք է կենտրոնանան ուսումնական պլանի/ծրագրի, դասընթացների կամ նյութերի, մեթոդաբանության և մանկավարժական ռազմավարության զարգացման վրա այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են.

- լեզուների ուսանում վաղ տարիքում;
- առավել քիչ օգտագործված և ուսուցանված լեզուները սովորելու և սովորեցնելու համար կիրառվող միջոցների զարգացում և տարածում;[9]
- ոլորտի և լեզուների ամբողջական ուսանում (CLIL);
- մարդկանց լեզվական կարողությունների ստուգում:

1.2.5 Առաջնայնություն 5. Գրագիտության զարգացում

ԵՄ սահմաններում դպրոցում սովորողների գրագիտության մակարդակը չի բարձրանում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ նվազում է: Կարդալու կուլտուրային գնալով ավելի ու ավելի է սպառնում նոր լրատվամիջոցների գրավչությունը: Ուստի, հատուկ կարիք կա խթանելու գրագիտության ձգտման պահանջը և զարգացնելու այն՝ հատկապես տղաների մոտ: Միգրանտների և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններում գտնվողների գրագիտության հարցը հատուկ ուշադրության կարիք ունի:

- Նախագծերը պետք է կենտրոնանան գրագիտություն սովորելու և սովորեցնելու համար մշակված նյութերի, դասընթացների, նոր մանկավարժական մեթոդների և ռազմավարությունների զարգացման, թեստավորման և իրականացման վրա:

1.2.6 Առաջնայնություն 6. Թվայնացված կրթական միջոցներ և ծառայություններ

Անհրաժեշտ է խթանել և ուժեղացնել ուսուցիչների հմտությունը և գիտելիքները, որպեսզի նրանք լավագույնս կարողանան կիրառել և օգտվել բոլոր տեսակի թվային կրթական միջոցների և ծառայությունների ընձեռած նոր հնարավորություններից, որոնք առկա են վաճառքում կամ զարգացած են ոչ պաշտոնական միջոցներով:

- Նախագծերը պետք է կենտրոնանան այն մշակված նյութերի, դասընթացների և նոր մանկավարժական մեթոդների զարգացման, թեստավորման և իրականացման վրա,

---

[9] Սա վերաբերվում է այն լեզուներին, որոնք սովորաբար չեն ուսուցանվում՝ անկախ նրանից, թե այդ լեզուն ՈՒՈԿԸ ծրագրին մասնակից երկրներից որևէ մեկի լեզուն է, թե "ռեգիոնալ" "փոքրամասնության" կամ միգանտների լեզուն է. ծրագիրը կարող է օգնել՝ բարելավելու այս լեզուների դասավանդման որակը, դրանք սովորելու հնարավորությունների մատչելիությունը, զարգացնել դրանք սովորելու համար նյութերի արտադրությունը, տարածումը և փոխանակումը, ինչպես նաև խթանել այս ոլորտում տեղեկատվության և լավագույն պրակտիկայի փոխանակումը:

որոնց նպատակն է զարգացնել բարձրորակ թվային միջոցների կիրառումը դպրոցում դասավանդման ընթացքում, մասնավորապես՝ այն միջոցների, որոնք կապված են առանցքային հմտությունների ձեռքբերման հետ:

1.3 Ցանցային աշխատանքներ

Առավելությունը տրվելու է հետևյալ թեմաներին.

1.3.1 Առաջնայնություն 1. Նախատարրական և վաղ կրթության ապահովման զարգացում

Այս առաջնայնության շրջանակներում ցանցային աշխատանքները պետք է ֆորում ապահովեն կրթություն ապահովողների, հետազոտող հաստատությունների և ասոցիացիաների համար, որոնք ապահովում են նախատարրական և վաղ կրթությունը: Այս աշխատանքներին ընդգրկվելու են նաև ծնողները՝ որպես պատասխանատվությունը կիսողներ: Աշխատանքները պետք է ընդգրկեն հետևյալ բոլոր ոլորտները.

- նախատարրական և վաղկրթության ապահովման գործում փորձի և պրակտիկայի նույնականացում, փոխանակում և կառուցում;
- մանկավարժական մոտեցումներ, որոնք երեխաների մոտ վաղ տարիքից կզարգացնեն ստեղծագործական կարողություններ;
- վաղ տարիքում լեզուների ուսանում;
- եվրոպական մակարդակով բազմակողմանի նախագծերի և այլ համագործակցության թեմաների համապատասխանեցում:

1.3.2 Առաջնայնություն 2. Դպրոցի տնօրինումը

Դպրոցների տնօրենները վճռական դեր են խաղում դպրոցի ղեկավարման և կազմակերպման հարցում: Ինչպես շատ այլ կազմակերպություններում, որտեղ տնօրինումն իրականցվում է մի քանիսի կողմից, ղեկավարման կարողություններ պահանջվում են պատասխանատու պաշտոններ զբաղեցնող ողջ անձնակազմից:

Այս առաջնայնության շրջանակներում ցանցային աշխատանքները պետք է կենտրոնանան հետևյալ հարցերի վրա.

- դպրոցի արդյունավետ ղեկավարների նախապատրաստման և վարժեցման զարգացում;
- դպրոցի ղեկավարների դերի ու նշանակության կարևորության գիտակցության բարձրացում:

1.3.3 Առաջնայնություն 3. Աջակցություն ձեռնարկչությանը և աշխատաշուկայի հետ կապերին

Այս առաջնայնության շրջանակներում ցանցային աշխատանքները պետք է ընդգրկեն հետևյալ բոլոր ոլորտները.

- նախնական կրթության, շարունակական ուսուցման և կարիերայի միջև հաջող փոխանցում՝ ներառյալ ուղղորդումը և խորհրդատվությունը;
- "դպրոց և աշխատաշուկա" ոլորտում Կոմենիուսի նախագծերի, այլ եվրոպական միջոցառումների և այլ գործունեության արդյունքների կիրառում և տարածում;
- փորձի փոխանակում և ցանցային աշխատանքների իրականացում շահագրգիռ կողմերի հետ (փորձագետներ, ինստիտուտներ և այլն), որի նպատակն է առավելագույնի հասցնել դպրոցի ավանդը երիտասարդների գործազրկության կրճատման գործում;
- սովորողների և սովորեցնողների մոտ նախաձեռնության և ձեռնարկչության զգացումի զարգացման ուղիների նույնականացում:

1.3.4 Առաջնայնություն 4. Թվայնացված կրթական միջոցներ և ծառայություններ

Այս առաջնայնության շրջանակներում ցանցային աշխատանքները պետք է կենտրոնանան հետևյալ ոլորտների վրա.

- թվային միջոցների հավաքագրում, վավերացում և տարածում, ինչպես նաև դրանց ինտեգրումը ազգային և տարածաշրջանային կրթական համակարգերում;
- երաշխավորել, որ միջոցները բազմալեզու են և արտահայտում են եվրոպական արժեքներն ու էթիկան;
- ապահովել ծառայություն և խորհրդատվությունը՝ կապված հեղինակային իրավունքի, լիցենզավորման, որակի երաշխիքի, հանրային-մասնավոր համագործակցության և բազմալեզվության հետ;
- խթանել առանցքային հմտություններին առնչվող թվային կրթական միջոցները և խրախուսել ուսուցիչներին՝ օգտագործելու թվային տեխնոլոգիան և միջոցները առավել կառուցողական:

1.3.5 Առաջնայնություն 5. Կրթությունը և գիտությունն առավել գրավիչ դարձնել

Այս առաջնայնության շրջանակներում ցանցային աշխատանքները պետք է կենտրոնանան հետևյալ ոլորտների վրա.

- միջնակարգ կրթության ոլորտում սովորողների համար գիտական դասընթացները դարձնել առավել գրավիչ;
- ապագա գիտական ուսումնասիրությունների և կարիերայի մասին տեղեկատվության ապահովում և զարգացում;

- գիտական կրթության մեջ և կարիերայում սեռերի միջև անհավասարությունը նվազեցնելուն ուղղված միջոցառումներ:

1.3.6 Առաջնայնություն 6. Հատուկ պահանջների կրթության /SEN զարգացում՝ ընդգրկելով բոլոր երիտասարդներին՝ հատկապես սահմանափակ կարողություններ ունեցողներին

Այս առաջնայնությունը կխթանի հատուկ կարիքների կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը, ինչպես նաև հատուկ դպրոցների վերածումը ռեսուրս-կենտրոնների, որոնք աջակցում են հատուկ կարիքների կրթության տարբեր ենթախմբերի: Այն ներառելու է նաև դպրոցական կրթության անձնակազմի վերապատրաստամն անհրաժեշտությունը և դպրոցները հասարակության համար առավել բաց դարձնելուն:

2. ԷՐԱՍՄՈՒՍ – ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ներածություն. Քաղաքականության համառոտագիր

ԵՄ բարձրագույն կրթության քաղաքականության նպատակն է աջակցել անդամ-երկրների բարձրագույն կրթության համակարգում իրականացվող բարեփոխումներին, ինչը դարձնում է նրանց առավել համախմբված, առավել պատասխանատու գիտելիքների հասարակության կարիքների հանդեպ: Բարեփոխումներն անհրաժեշտ են գլոբալացման մարտահրավերներին դիմակայելու և եվրոպական աշխատուժը մարզելու և վերապատրաստելու համար: Նրանք պետք է հնարավորություն տան բարձրագույն կրթական հաստատություններին՝ խաղալու իրենց դերը Գիտելիքների Եվրոպայում և մեծապես նպաստելու աճի և աշխատանքի լիսաբոնյան ռազմավարությանը:

Համալսարանների արդիականացմանն անդրադառնալու շրջանակներում Հանձնաժողովը սահմանել է բարձրագույն կրթության ոլորտում 3 հիմնական բարեփոխումներ.

- Ուսումնական ծրագրի բարեփոխում. Եռաստիճան համակարգ (բակալավրիատ- մագիստրատուրա- ասպիրանտուրա), կրթություն ըստ կարողությունների, կրթական ճկուն ուղիներ, որակավորման ճանաչում, շարժականություն՝ Բոլոնիայի գործընթացներին համապատասխան;
- Կառավարման բարեփոխումներ. Բուհերի ինքնուրույնություն և պատասխանատվություն, ռազմավարական մասնակցություն, որակի երաշխիք;
- Ֆինասավորման բարեփոխումներ. Բուհերի տարբերակված եկամուտ, ուսման վարձավճարներ, շնորհներ և վարկեր, անաչառություն և մատչելիություն, ԵՄ կողմից նպատակային ֆինանսավորում:

2006թ. մայիսին ԵՀ-ն հրապարակեց Հաղորդագրություն՝ (Communication) “Բուհերի արդիականացման օրակարգի տարածում՝ կրթություն, հետազոտություն և նորարարություն”,[10] որը սահմանում էր 9 գործոններ, որոնք անհրաժեշտ են բուհերի արդիականացման օրակարգի տարածման համար: Գործոնների համար սահմանված էին բարեփոխումների երեք ոլորտներ: Այդ գործոններն են. 1. Եվրոպայում բուհերի շուրջ եղած պատնեշների վերացում; 2. Բուհերին իրական ինքնուրույնության և պատասխանատվության երաշխավորում; 3. Գործարար համայնքի հետ կառուցվածքային համագործակցության նախադրյալների ապահովում; 4. Աշխատաշուկայի համար հմտությունների և կարողությունների ճիշտ համամասնության ապահովում; 5. ֆինանսավորման խնդիրների նվազեցում, կրթության և հետազոտության ոլորտում ֆինանսավորման առավել արդյունավետություն; 6. ներքին և արտաքին կարգապահության ապահովում; 7. հասարակության հետ փոխազդեցության միջոցով գիտելիքների ակտիվացում; 8. գերազանցության շնորհում

[10] COM(2006)208

ամենաբարձր մակարդակով; 9. եվրոպական բարձրագույն կրթության ոլորտը և եվրոպական ուսումնասիրությունների ոլորտը աշխարհին առավել տեսանելի և գրավիչ դարձնելը:
Բուհերին հրավիրում ենք ցուցաբերելու իրենց լիարժեք մասնակցությունը գիտելիքների եռանկյունում (կրթություն, հետազոտություն և նորարարություն) և մասնակցելու նախագծերին, որոնք կենտրոնացված են բուհերի և ձեռնարկությունների միջև համագործակցության վրա. սա հենց այն առաջնայնությունն է, որն ընդգրկված է Հանձնաժողովի առաջարկում: Այս առաջարկով նախատեսվում է Տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի ստեղծում,[11] բայց այն վերաբերում է բարձրագույն կրթությանն ընդհանրապես:
Որակի երաշխիքների եվրոպական հետագա համագործակցության Հանձնարարական 2006-ի[12] իրականացումը շարունակելու է հանդիսանալ գլխավոր շեշտադրումը այնպես, ինչպես Եվրոպական Որակավորման շրջանակի իրականացումը, և ամրապնդելու է կապերը Եվրոպական բարձրագույն կրթության ոլորտի Որակավորումների շրջանակի հետ: Լիսաբոնյան ռազմավարությունը և Բոլոնիայի գործընթացը շարունակելու են հանդիսանալ բարձրագույն կրթության քաղաքականության օրակարգի հիմնական շրջանակը՝ մշտապես հաշվի առնելով ԵՄ-ի և Բոլոնիայի Նախարարների ժողովի եզրակացությունները:

<u>Ներածություն. Էրասմուսի հատուկ և գործառնական նպատակները</u>

Էրասմուս ծրագրի առանձնահատուկ նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 21.1-ում, հետևյալն են.

(ա) աջակցել Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ձեռքբերմանը;
(բ) ուժեղացնել բարձրագույն կրթության և առավել բարձ մասնագիտական կրթության նպաստը նորարարության գործընթացում:

Էրասմուս ծրագրի գործառնական նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 21.2-ում, հետևյալն են.

(ա) բարձրացնել որակը և ուսանողների ու դասավանդող անձնակազմի շարժականության ծավալը Եվրոպայում այնպես, որ մինչև 2012թ. Էրասմուս ծրագրով և նրանից բխող ծրագրերով նախատեսված ուսանողների շարժումն ունենա առնվազն 3 մլն. անհատ մասնակից;
(բ) բարձրացնել որակը և մեծացնել եվրոպական բուհերի միջև բազմակողմանի համագործակցության ծավալները;

[11] http://ec.europa.eu/education/policies/educ/eit/index_en.html

[12] Recommendation of the European Parliament and of the Council of 15 February 2006 on further European cooperation in quality assurance in higher education, OJ L 64 of 04.03.2006

(գ) մեծացնել Եվրոպայում ստացած բարձրագույն կրթության որակավորումների միջև թափանցիկության և համապատասխանության աստիճանը;
(դ) բարձրացնել որակը և ընդլայնել բուհերի և ձեռնարկությունների միջև համագործակցությունը;
(ե) հեշտացնել նորարարական փորձի զարգացումը երկրորդական մակարդակում կրթության և ուսուցման մեջ, ինչպես նաև փորձի փոխանցումը մասնակից մի երկրից մյուսը;
(զ) աջակցել նորարարական ICT-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և փորձի զարգացմանը ողջ կյանքի ընթացքում ուսումնառության գործընթացում:

<u>Էրասմուս ծրագրի գործողությունների առաջնայնությունները</u>

2.1 Շարժականություն

<u>Ուսանողների շարժականություն՝ ներառյալ ուսանողներին ձեռնակություններում տեղավորելը, ինչպես նաև դասավանդողների և մնացած աշխատակազմի շարժականություն</u>

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծման հարցում ելակետային դեր է խաղում ուսանողների և դասավանդողների անձնակազմի շարժականությունը: Էրասմուսի մասնակից հաստատությունների խնդիրն է մեծացնել ուսանողների շարժականությունը ուսումնառության և աշխատանքի ընդունվելու համար այնպես, որ 2012թ. Էրասմուսի ուսանողների թիվը հատի 3 մլն-ի սահմանը, ինչպես նաև մեծացնել դասավանդող և այլ անձնակազմի շարժականությունը:

Բուհերից պահանջվում է, որ նրանք ուսանողների և անձնակազմի շարժականության բարձր որակ ապահովեն, ինչպես այդ նշված է Էրասմուսի Համալսարանի Կանոնադրությամբ և Շարժականության մասին եվրոպական որակի կանոնադրությամբ:[13]

Ուսանողների շարժականության վերաբերյալ եվրոպական մակարդակով որևէ ակադեմիական հատուկ առաջնայնություններ չեն նշվում, սակայն այս կապակցությամբ ազգային իշխանությունները կարող են հայտարարել որոշ հատուկ առաջնայնություններ: Համընդհանուր նպատակը ԵՄ-ում աշխարհագրական և առարկայական հավասարակշռված ծածկույթի ձեռքբերումն է:

---

[13] Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի Հանձնարարական 18 դեկտեմբերի 2006թ. կրթության և դասավանդման նպատակով անդրազգային շարժականության վերաբերյալ. Շարժականության մասին եվրոպական որակի կանոնադրություն (2006/961/EC):
http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2006:394:0005:0009:EN:PDF .

Դասավանդող անձնակազմի շարժականության շրջանակներում առաջնայնությունը տրվելու է ձեռնարկություններից անձնակազմի շարժի ընդլայնմանը՝ դեպի բուհերում դասավանդում:

<u>Էրասմուսի ինտենսիվ ծրագրեր (IP)</u>

Առաջնայնությունը տրվելու է այն ծրագրերին, որոնք
- կենտրոնացած են այն ոլորտների վրա, որոնց ավելի կարճ ծրագրերը առանձնահատուկ են արժեվորվում;
- մասնակից հաստատությունների գործողությունների համար տալիս են լիարժեք ճանաչման և կրեդիտների հավաստիք;
- ուսումնական ինտեգրված ծրագրերի մասն են կազմում, որոնք հանգեցնում են կրկնակի կամ միացյալ աստիճանների;
- ցուցաբերում են ուժեղ բազմաճյուղային մոտեցում;
- օգտագործում են նորարարական ICT-ի գործիքները և ծառայությունները՝ աջակցելու համար Ինտենսիվ ծրագրերի նախապատրաստմանը և ընթացքին, և դրանով իսկ նպաստելով խնդրո առարկա շրջանում կայուն կրթություն ստացող համայնքի ստեղծմանը:

<u>Էրասմուսի ինտենսիվ լեզվի կուրսեր (EILC)</u>

Առաջնայնությունը տրվելու է դասընթացների այն կազմակերպիչներին, որոնք

- ցույց կտան, որ կարող են կազմակերպել և անցկացնել Էրասմուսի ինտենսիվ լեզվի կուրսերը;
- կտրամադրեն լիարժեք ճանաչման և կրեդիտների հավաստիքներ:

2.2 Բազմակողմանի ծրագրեր

Առավելությունը տրվելու է այն նախագծերին, որոնք կենտրոնացած են այն շրջանների և թեմաների վրա, որոնց այս բաժնի սահմաններում արդեն իսկ ֆինանսավորված նախագծերում բավարար չափով չեն անդրադարձել:

2.2.1 Ուսումնական ծրագրի զարգացման (CD) նախագծեր

Ուսումնական ծրագրի զարգացման նախագծերը մշակվել են, որպեսզի աջակցեն բուհերում դասավանդման գործընթացի նորացմանը և զարգացմանը: Դրանք կարող են առաջարկվել ցանկացած ակադեմիական մակարդակում:

Առավելությունը կտրվի այն նախագծերին, որոնց նպատակն է զարգացնել կամ վերնայել ներքոնշյալներից մեկը կամ մի քանիսը.

➢ ինտեգրված ծրագրեր, որոնք պարունակում են ուսման լիարժեք ցիկլ (բակալավրիատի կամ մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի մակարդակ) և որոնք կհանգեցնեն համընդհանուր ճանաչված կրկնակի կամ միացյալ աստիճանի;

- շարունակական կրթության համար մշակված ուսումնական ծրագրեր և մոդուլներ, որոնց նպատակն է անցյալում ձեռք բերված գիտելիքների թարմացումը;
- մոդուլների դասավանդում բարձրակարգ բազմաշերտ ոլորտներում կամ այն ոլորտներում, որոնք դասավանդման համար կարիք ունեն ուժեղ անդրազգային համագործակցության:

2.2.2 Ծրագրեր, որոնք սևեռված են բուհերի և ձեռնարկությունների միջև համագործակցության վրա

Առավելությունը տրվելու է այն նախագծերին, որոնք

- կարևոր դեր են հատկացնում ակադեմիական հաստատություններից դուրս գործընկերներին, հատկապես՝ ձեռնարկություններին (մասնավորաես՝ փոքր և միջին ձեռնարկություններին), մասնագիտացված կազմակերպություններին, առևտրի պալատներին, սոցիալական գործընկերներին կամ տեղական/տարածաշրջանային մարմիններին;
- ուժեղացնում են կապերը ուսման, ապագա կարողությունների և աշխատանքի ընդունվելու կարիքների միջև, օրինակ՝ խթանելով բիզնեսի ներդրումը դասընթացի մշակման և բովանդակության մեջ;
- զարգացնում են կրթական ծառայությունները, ինչպես, օրինակ, դասընթացները, որոնց նպատակն է աշխատողների գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացումը (ներառյալ լեզվի իմացությունը՝ մրցունակությունը մեծացնելու նպատակով), բարձր մակարդակի մասնագիտական վերապատրաստումները և այլն;
- մշակում են ռազմավարություններ, որոնք կխթանեն բուհերի և ձեռնարկությունների միջև փոխանակումը և համագործակցությունը;
- խթանում են ձեռնարկչությունը, ստեղծագործ միտքը և նորարարական մոտեցումները՝ որպես ուսանողների ուսումնական ծրագրի մի մաս և որպես դասավանդողների/հետազոտություն կատարողների կարողություն
- գնահատում են ապագա գիտելիքները և աշխատելու անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով հասնել նրան, որ գիտելիքների (ունակությունների) և ապագա աշխատաշուկայի կարիքներն առավել համապատասխան լինեն:

2.2.3 Նախագծեր, որոնք աջակցում են բուհերի օրակարգի արդիականացմանը

Առավելությունը տրվելու է այն նախագծերին, որոնք օգնում են բուհերին զարգացնել ներքոնշյալներից մեկը կամ մի քանիսը.

- ակադեմիական գործունեություն իրականացնելու և դրանք առավել թափանցիկ դարձնելու ռազմավարություն (օրինակ՝ ներկայացնելով որակավորումը արդյունքների տեսանկյունից), և որոնք ուժեղացնում են ուղեցույցերի ապահովումը;

- կառավարմանը և ֆինանսավորմանն ուղղված գործողություններ, որոնք հաստատություններին առավել պատասխանատու կդարձնեն աշխատաշուկայի, քաղաքացիների և, ընդհանրապես, հասարակության կարիքների հարցում;
- ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ռազմավարություններ (կապելով բարձրագույն կրթությունը մասնագիտական կրթության և ուսուցման ապահովման և սերտիֆիկացման հետ), որոնց նպատակն է օգնել, որ բուհերը դառնան "շարունակական կրթության" կամ "բաց կրթական կենտրոններ" իրենց շրջաններում;
- չափանիշներ, որոնք կբարձրացնեն ծրագրի իրականացման որակը և կբարձրացնեն պատասխանատվությունը;
- կզարգացնեն մատչելիության միջոցառումներ այն մարդկանց համար, ովքեր ունեն ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթության հիմքեր կամ ովքեր ունեն այլընտրանքային որակավորում, օր.՝ նախնական փորձառական կրթություն;
- ռազմավարություն, որը կմեծացնի բուհերի գրավչությունը և ընդհանրապես հասարակությանը կտեղեկացնի նրանց աշխատանքի մասին առավել արդյունավետ:

2.2.4 Վիրտուալ ուսումնական հաստատությունների նախագծեր

Առավելությունը տրվելու է այն նախագծերին, որոնք ակնհայտորեն գտնվում են ICT-ն բուհերում արդյունավետորեն ընդգրկելու գլոբալ ռազմավարության շրջանակներում, և որոնց նպատակն է հասնել ներքոնշյալներից մեկին կամ մի քանիսին.

- զարգացնել և եվրոպական մակարդակով տարածել վիրտուալ ուսումնական հաստատություններ հիմնելու և պահպանելու մոտեցումը. ապահովել բաց կրթական ռեսուրսներ, համոզվել, որ կազմակերպչական, տեխնիկական և որակի հետ կապված հարցերը միտված են մտքերով կիսվելուն և դրանք եվրոպական մակարդակով մատչելի դարձնելուն;
- զարգացնել կամ վերանայել ինտեգրված ծրագրերը, որոնք ընդգրկում են ուսումնառության ամբողջական ցիկլը (բակալավրիատ, մագիստրատուրա կամ ասպիրանտուրա) և հանգեցնում են համընդհանուր ընդունված կրկնակի կամ միացյալ աստիճանի, որում ICT միջոցներն օգտագործվում են, որպեսզի ապահովեն ուսանողների և աշխատակազմի վիրտուալ շարժականությունը;
- խթանել որոշում կայացնողների միջև համագործակցությունը և ռազմավարական փորձի փոխանակումը վիրտուալ ուսումնական հաստատությունների զարգացման ոլորտում՝ հիմնական ուշադրությունը սևեռելով ICT միջոցների ազդեցության, արժեքի և օգուտների վրա:

2.3 Թեմատիկ ցանցային աշխատանքներ

Էրասմուսի թեմատիկ ցանցային աշխատանքները կարող են լինել երկու տեսակ.

- Ակադեմիական ցանցային աշխատանքները մշակված են, որպեսզի խթանեն նորարարությունը որևէ հատուկ ուսումնական ճյուղում, մի քանի ճյուղերում կամ բազմաճյուղ ոլորտներում:
- Կառուցվածքային ցանցային աշխատանքները մշակված են, որպեսզի զարգացնեն և արդիականացնեն բարձրագույն կրթության կազմակերպման, կառավարման, տնօրինման կամ ֆինանսավորման առանձին ասպեկտները:

Յուրաքանչյուր ցանցում ընդգրկվող գործունեության մինիմումները նշված են Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ծրագրի Ուղեցույցում: Բոլոր ցանցերը պետք է համախմբեն համապատասխան քանակությամբ մասնակիցների, ովքեր հետաքրքրված են նշված թեմայով:

Առավելությունը կտրվի ցանցային այն առաջարկներին, որոնք ուշադրությունը սևեռել են այն ոլորտների և թեմաների վրա, որոնք այս գործողությամբ արդեն իսկ ֆինանսավորված ցանցային աշխատանքներով բավարար չափով չեն արծարծվել (տես բաժին 2.3.1): Այն ցանցային աշխատանքները, որոնց ֆինանսավորումն արդեն ավարետվել է և դիմում են շարունակելու համար, ևս կունենան առավելություններ, քանի որ այդ դեպքում նրանք կարող են արդեն իսկ ցույց տալ որակյալ իրականացում (օր.՝ ձեռքբերումները և ազդեցություն), որը ամուր հիմք կարող է հանդիսանալ ցանցային աշխատանքի հետագա զարգացումների և էական ձեռքբերումների համար (օր.՝ նրանց գործունեությունը, մեթոդոլոգիական մոտեցումները, աշխարհագրական ընդգրկումը):

Առաջնայնություններն այս երկու տեսակ ցանցային աշխատանքների համար հետևյալն են.

2.3.1 Ակադեմիական ցանցային աշխատանքներ

Նախագծերը պետք է կենտրոնան հետևյալ խնդիրների վրա.

- օրենք,
- տնտեսություն,
- գրականություն,
- մշակույթի և կրթության միջև կապերի ստեղծում,
- փիլիսոփայություն,
- մաթեմատիկա,
- եվրոպական ինտեգրման վերաբերյալ դասեր,
- միջմշակութայնություն և բազմալեզվություն,
- ուսուցիչների (դասավանդողների) կրթություն,
- կայուն զարգացում՝ ներառյալ էներգիայի և կլիմայի փոփոխության վերաբերյալ հարցեր,
- ֆիզիկական կրթություն և սպորտ,

- ձեռնարկչություն և նորարարություն,
- խաչվող ճյուղային թեմաներ:

2.3.2 Կառուցվածքային ցանցային աշխատանքներ

- **Բարձրագույն կրթության մատչելիություն**

Հիմնական խնդիրները հետևյալն են՝ ոչ ավանդական սովորողների, օր.՝ մասնագետների, տարեց մարդկանց և ոչ ֆորմալ որակավորում ունեցողների համար մատչելության ընդլայնում, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ նախնական կրթության ճանաչում:

- **Կրթության, հետազոտության և նորարարության "գիտելիքների եռանկյուն"**

Հիմնական խնդիրներն են բարձրագույն կրթության դասավանդման և հետազոտության միջև կապերի ամրապնդումը և դրանց ներառումը արդյունաբերության և ձեռնարկատիրության մեջ, ինչպես նաև ուսումնական շրջանների ստեղծում, որոնք կենտրոնացված են համալսարանների վրա՝ որպես մի ուժ, որը կբերի տնտեսության զարգացման:

- **Բուհերի կառավարում**

Հիմնական խնդիրն է՝ ապահովել համալսարաններին ինքնուրույնությամբ և պատասխանատվությամբ, աշխատակազմի ղեկավարման զարգացած համակարգերով, ինչպես նաև ներքին և արտաքին որակի ապահովման մեխանիզմների իրականացումը, որոնք համընթաց կլինեն 2005թ. Բերգենում ընդունված՝ Եվրոպական բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման ստանդարտներին և ուղեցույցներին:

3. ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ – ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ներածություն. Քաղաքականության համառոտագիր

Լեոնարդո դա Վինչի ծրագրի քաղաքականության շրջանակը շարունակում է հանդիսանալ Կոպենհագենյան գործընթացը, քանի որ այն թարմացվել է Մաաստրիխտի կոմյունիկեով (2004թ.) և վերջերս՝ Հելսինկիի կոմյունիկեով (2006թ.):Գործընթացը հիմնականում սևեռված է մասնագիտական կրթության և ուսուցման (VET) համակարգերի գրավչության, որակի և իրականացման վրա, ինչպես նաև թափանցիկության, տեղեկատվական և ուղեցույցների համակարգի, կարողությունների և որակավորման ճանաչման և եվրոպական ծավալներն ամրապնդելու վրա: Մինչև 2010թ. ընկած ժամանակահատվածում ծրագրի գործունեության վրա էական ազդեցություն կունենան հետագա զարգացումը խթանելու համար ձեռնարկված քայլերը, ինպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման համար ընդհանուր եվրոպական գործիքների փորձարկումը և իարկանացումը: Այդ գործիքներն են Մասնագիտական կրթության և ուսուցման համար Եվրոպական կրեդիտի փոխադրման համակարգի (ԵԿՓՀ/ECVET) զարգացումը, Եվրոպական որակավորման շրջանակի (ԵՈՇ/EQF) իրականացումը և Մասնագիտական կրթության և ուսուցման որակի հավաստման մասին 2004թ. Խորհրդի եզրակացության շարունակությունը: Այս գործողությունները էական կլինեն երկկողմանի ուսուցման, համատեղ աշխատանքի, փորձի փոխանակման և ինչը ինչպես սովորելու գործընթացների ամրապնդման համար:
Հատուկ ուշադրություն է հատացվելու Լեոնարդո դա Վինչի ծրագրի բոլոր գործողություններին տարբեր սեկտորների, հասարակական գործընկեր կազմակերպությունների և ընկերությունների, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցության հեշտացմանը:

Ներածություն. Լեոնարդո դա Վինչի ծրագրի հատուկ և գործառնական նպատակները

Լեոնարդո դա Վինչի ծրագրի հատուկ նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 25.1-ում, հետևյալն են.
(ա) աջակցել մասնակիցներին գիտելիքների, կարողությունների և որակավորման հետագա ուսուցման գործընթացներում, որպեսզի առավել հեշտ լինի նրանց անձնական զարգացումը, աշխատելու հնարավորությունը և եվրոպական աշխատաշուկայում մասնակցությունը;
(բ) աջակցել մասնագիտական կրթության և թրեյնիգնի համակարգում, հարաբերություններում և պրակտիկայում որակի և նորարարության զարգացմանը;
(գ) բարձրացնել մասնագիտական կրթության և ուսուցման ու շարժականության գրավչությունը գործատուների և անհատների համար, ինչպես նաև առավել հեշտացնել աշխատող սովորողների շարժականությունը:

Լեոնարդո դա Վինչի ծրագրի գործառնական նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 25.2-ում, հետևյալն են.
(ա) բարձրացնել նախնական մասնագիտական կրթության և ուսուցման մեջ, ինչպես նաև շարունակական ուսուցման մեջ ընդգրկված անհատների որակը և մեծացնել նրանց շարժողականության ծավալները Եվրոպայում այնպես, որ Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ծրագրի ավարտին առնվազն 80.000 մարդ արդեն ձեռնարկություններում աշխատելիս լինի;
(բ) բարձրացնել որակը և մեծացնել կրթական հնարավորություններ ընձեռող կազմակերպությունների կամ հաստատությունների, ձեռնարկությունների, սոցիալական գործընկերների և Եվրոպայում այլ համապատասխան մարմինների միջև համագործակցության ծավալները;
(գ) հեշտացնել մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում նորարար պրակտիկայի զարգացումը ոչ երրորդային մակարդակում, ինչպես նաև այդ պրակտիկայի փոխադրումը մասնակից մի երկրից մյուսը;
(դ) զարգացնել որակավորման և կարողությունների թափանցիկությունը և ճանաչումը, ներառյալ նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության համար պահանջվողները;
(ե) խրախուսել ժամանակակից օտար լեզուների ուսանումը;
(զ) աջակցել նորարարական ICT-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և պրակտիկայի զարգացմանը ողջ կյանքի ընթացքում ուսումնառության գործընթացում:

Հարկ է նշել, որ Լեոնարդո դա Վինչի ծրագրում ընդգրկված շարժականության գործողությունների և "նորարարության փոխադրում" նախագծերի շրջանակներում տեղական իշխանությունները կարող են իրենք որոշում կայացնել որոշ կոնկրետ առաջնայնությունների վերաբերյալ, այսինքն՝ խնդրո առարկա ոլորտները, այն երկրները, որոնց ուղղվում են ծրագրերը և այլն: Այդ առաջնայնությունները պետք է համապատասխանեն փաստաթղթում նշված եվրոպական առաջնայնություններին և համաձայնեցվեն Հանձնաժողովի հետ: Դրանք պետք է հրապարակվեն կամ հատուկ ազգային հրատարակությամբ, կամ ազգային գործակալությունների համացանցային կայքերում:

<u>Լեոնարդո դա Վինչի ծրագրի գործողությունների առաջնայնությունները</u>

3.1 Շարժականություն և մասնակցություն

Ուժեղ շեշտադրում է կատարվում շարժականության կազմակերպման վրա՝ ներառյալ Շարժականության մասին Եվրոպական որակի կանոնադրության սկզբունքների հիման վրա արտասահմանի համար իրականացվող մանկավարժական, լեզվագիտական և մշակութային նախապատրաստությունները և միջոցառումները:

Մասնագիտական ուսուցմանը մասնակցել ցանկացողների և մասնագիտական կրթության և ուսուցման մասնագետների շարժականությունը

Այս գործողությունն ընդգրկում է շարժականության 2 տեսակ.

(1) սովորողների շարժականությունը նախնական մասնագիտկան ուսուցման ցանկացած տեսակի մեջ և աշխատաշուկայում ընդգրկվածների շարժականությունը մասնագիտական ուսուցման մեջ:

Առավելությունը կտրվի այն նախագծերին, որոնք կազմակերպում են սովորողների շարժականությունը, այսինքն՝ նրանց, ովքեր ընդգրկված են կրկնակի աշակերտական կամ այլ մասնագիտական կրթության համակարգում՝ հիմնված այլընտրանքային կրթության կամ ձեռնարկությունում աշխատանքի հետ կապված թրեյնիգների վրա;

(2) Մասնագիտական կրթության և ուսուցման մասնագետների շարժականությունը

Առավելությունը կտրվի

- ուսուցիչների, թրեյներների և կրկնուսույցների կարողությունների զարգացմանը
- փոքր և միջին ձեռնարկությունների հետ համագործակցությանը:

Լեոնարդո դա Վինչի ծրագրի մասնակցությունը

Առաջնայնության որևէ թեմա չկա:

3.2 Բազմակողմանի նախագծեր

Լեոնարդո դա Վինչի ծրագրի այս բաժնում ընդգրկված են 2 տեսակ նախագծեր.

- նորարարության փոխադրման բազմակողմանի նախագծեր (ոչ կենտրոնացված ղեկավարում)
- նորարարության զարգացման բազմակողմանի նախագծեր (կենտրոնացված ղեկավարում):

Լեոնարդո ծրագրի բոլոր բազմակողմանի նախագծերի համար առաջնայնություններ են Մասնագիտական ուղղվածությամբ լեզուների ուսուցումը (VOLL) և Ամբողջական լեզվի ուսուցումը:

3.2.1. Առաջնայնություն 1. Կարողությունների և որակավորման ճանաչում և թափանցիկություն

Այս առաջնայնությամբ նախագծերը նպատակ ունեն աջակցել ազգային և սեկտորային որակավորման համակարգերին ու շրջանակներին, որոնք միանում են թափանցիկությունն ու ճանաչումը խթանելու համար մշակված ընդհանուր եվրոպական գործիքներին, ինչպիսիք են Եվրոփաս պորտֆոլիոն, Մասնագիտական կրթության և ուսուցման համար Եվրոպական կրեդիտի փոխադրման համակարգը (ECVET) և Եվրոպական որակավորման շրջանակ (EQF): Նրանք պետք է աջակցեն այնպիսի շրջանակների էլեմենտների թեստավորմանը և իրականացմանը, ինչպիսիսք են.

- որակավորման նկարագրությունը ուսումնառության արդյունքների տեսանկյունից;

➢ ազգային որակավորման շրջանակների և համակարգերի միջոցով Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) որակավորումների գծագրում Եվրոպական որակավորման շրջանակի (EQF) մակարդակներում;

➢ կրեդիտային միավորների կուտակմամբ կրթության արդյունքների միավորների փոխադրման որակավորման մշակում;

➢ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստում կրթության արդյունքների ճանաչման, փոխադրման և վավերացման համար ճկուն մեխանիզմներով ՄԿՈՒ ծրագրերի մշակում;

➢ առանձին սեկտորներում եվրոպական գործիքների և շրջանակների հավաքագրում և հետագա զարգացում:

3.2.2. Առաջնայնություն 2. ՄԿՈՒ համակարգերի և փորձի որակի և գրավչության զարգացում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է.

➢ զարգացնեն և փորձարկեն որակի հավաստման գործընթացները նախնական և շարունակական ՄԿՈՒ ոլորտում՝ օգտագործելով նաև Եվրոպական որակի հավաստման
շրջանակները;[14]

➢ ուժեղացնեն բարձրորակ ՄԿՈՒ ուղիների զարգացումը, որոնք տանում են դեպի փոխադրում աշխատանքի և/կամ առաջընթացի դեպի հետագա և բարձրագույն կրթություն, ինչպես նաև պետք է խթանեն բոլոր մակարդակներում ուղղորդումը և խորհրդատվությունը;

➢ սոցիալական գործընկերների և բոլոր համապատասխան մասնակիցների հետ ամուր համագործակցության միջոցով ուժեղացնեն ՄԿՈՒ համակարգերի գրավչությունը և ուղղորդումը:

3.2.3. Առաջնայնություն 3. ՄԿՈՒ ուսուցիչների, թրեյներների և կրկնուսույցների հմտությունների և կարողությունների զարգացում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է հաշվի առնեն ՄԿՈՒ-ի և ուղղորդող մասնագետների հմտությունների և կարողությունների զարգացման կարիքը, ինպես նաև վերջիններիս շարունակական մասնագիտացված զարգացումը և լեզուների ուսանումը նրանց կողմից: Դիմումները պետք է ներառեն ներքոնշյալ բոլոր կետերը.

➢ ՄԿՈՒ մասնագետների դերակատարման զարգացումն ի պատասխան պարբերաբար փոփոխությունների, ինչպես օրինակ՝ անցումը դեպի արդյունքների ուսումնասիրման և հմտությունների վրա հիմնված համակարգերին;

---

[14] Եվրոպական որակի հավաստման շրջանակը մի համակարգ է, որի նպատակն է օգնել Անդամ-երկրներին և մյուս մասնակից երկրներին՝ զարգացնելու, բարելավելու, հսկելու և շրջանառության մեջ դնելու իրենց սեփական համակարգերը և պրակտիկան՝ ընդհանուր սկզբունքների և չափանիշների հիման վրա:

➢ ՄԿՈՒ մասնագետների և աշխատաշխարհի (ձեռնարկություններ, մասնագիտական սեկտոր և այլն) միջև կապերի ամրապնդում;
➢ ՄԿՈՒ մասնագետների հմտությունների զարգացում և ուսումնական ծրագրերում նրանց մասնակցության զարգացում:

3.2.4. Առաջնայնություն 4. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտությունների զարգացում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է աջակցեն աշխատանքային առօրյայի հետ սերտ կապերին, որպեսզի ՄԿՈՒ-ն դարձնեն աշխատաշուկայի պահանջներին առավել համապատասխան: Նախագծերի նպատակը պետք է լինի կարողությունների և հմտությունների պահանջների սեկտորային նույնականացման և ակնկալիքների զարգացումը և դրանց ինտեգրումը ՄԿՈՒ գործընթացներին: Այն ենթադրում է նաև աշխատանքի մեջ ուսման ինտեգրացիայի խթանումը: Դիմումները պետք է ներառեն հետևյալը.
➢ ուժեղացնել տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությունը ՄԿՈՒ-ն աշխատաշուկային առավել համապատասխան դարձնելու գործընթացներին՝ հաշվի առնելով համակարգային փոփոխությունները, ինչպիսին է, օրինակ, անցումը դեպի արդյունքների և կարողությունների վրա հիմնված համակարգի ուսումնասիրությանը;
➢ հմտությունների պահանջների ակնկալիքներն արդարացնելու նպատակով զարգացնել և փորձարկել ընդհանուր սեկտորային մեթոդները և համակարգերը՝ ՄԿՈՒ-ում ընդգրկելով կազմակերպությունների /սեկտորային կազմակերպությունների /սոցիալական գործընկերների;
➢ ուժեղացնել ուսման ընդգրկվածությունը աշխատանքային առօրյայի մեջ՝ խթանելով կրթական-կառուցողական միջավայրը աշխատավայրում, աշխատավայրում վերապատրաստումները և աշակերտության ուղիները՝ որպես աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտությունների զարգացման հիմք:

3.2.5. Առաջնայնություն 5. Ռիսկային խմբերի կարողությունների մակարդակի բարձրացում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է իրենց ուշադրությունը սևեռեն հետևյալի վրա.
➢ աշխատաշուկայում ոռշակի բարդություններ ունեցող մարդկանց ինտեգրում, օրինակ՝ նախկին շրջանավարտները, ցածր հմտություններ ունեցող աշխատողները, որոշակի ֆիզիկական կարողություններ ունեցող մարդիկ, էմիգրանտները և նրանք, ովքեր ժամանակին միգրանտ են եղել, ազգային փոքրամասնությունները՝ զարգացնելով աշխատանքին առնչվող նրանց հմտությունները և կարողությունները;
➢ բարձրացնել կանանց կամ տղամարդկանց հետաքրքրությունը և մասնակցությունը ՄԿՈՒ այն ոլորտներում, որտեղ նրանք ներկայացված չեն (օրինակ՝ կանայք՝ տեխնոլոգիաների ոլորտում);

➢ Ժողովրդագրական փոփոխությունների հետևանքով առաջացած խնդիրների կարգավորում, ինչպիսին է, օրինակ՝ տարեց աշխատողներին աշխատանքի մեջ պահելը:

Այս գործունեությունը կօգնի Անդամ-երկրներին հասնել կրթության և ուսուցման մասնակցության համար սահմանված չափաիշներին մինչև 2010թ.:

3.3 Ցանցային աշխատանքներ

Այստեղ ներկայացված նախագծերը պետք է աջակցեն ՄԿՈՒ-ն իրականացնողների, ձեռնարկությունների, տնտեսական սեկտորների, սոցիալական գործընկերների և ուսուցում իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցությանը սեկտորային հիմքի վրա:

Ցանցային աշխատանքները պետք է աջակցեն հետևյալին.

3.3.1 ECVET ցանցային աշխատանքներ

Աջակցել ՄԿՈՒ համար Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգի (ECVET)[15] փորձարկմանը հետևյալ հիմնական սեկտորներում.

- Ավտոմոբիլի արտադրություն և պահպանում;
- Արդյունաբերության, մասնավորապես՝ քիմիական արդյունաբերության գործարկում;
- Տրանսպորտ և լոջիստիկա;
- Կառուցապատում;
- Հյուրանոց և սպասարկում;
- Առևտուր;
- Հարմարություն /արհեստի սեկտոր/
- Բանկային գործ, ապահովագրություն և ֆինանսական ծառայություններ:

3.3.2 Շահագրգիռ կողմերի ցանցային աշխատանքներ

➢ Անհատական սեկտորում և ընդհանուր առմամբ ՄԿՈՒ-ում ուսուցման լավագույն պրակտիկայի նույնականացում և տարածում;

➢ ՄԿՈՒ ապահովողների և ձեռնարկությունների միջև համագործակցության զարգացում և ուժեղացում:

[15] http://ec.europa.eu/education/policies/educ/ecvet/com180_en.pdf

4. ԳՐՈՒՆԴՏՎԻԳ – ՄԵԾԱՀԱՍԿԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Ներածություն. Քաղաքականության համառոտագիր

ԵՄ տնտեսական աճը, մրցունակությունը և սոցիալական ընդգրկման քաղաքականությունը (Լիսաբոնյան մարտավարություն) ապահովում է Գրունդտվիգ ծրագրի համար մի շրջանակ, որի նպատակն է կրկնակի կրթության մարտահրավերի ապահովումը մի կողմից այն մեծաթիվ մարդկանց համար, ովքեր վաղուց են ավարտել դպրոցը կամ, միգրանտների պարագայում, որևէ կրթություն ստանալու հնարավորություն չեն ունեցել, և մյուս կողմից՝ մեծահասկաների համար: Մեծահասկաների կրթությունն օգնում է պատասխանել այս մարտահրավերներին՝ 2 կատեգորիայի անհատներին էլ հնարավորություն տալով զարգացնել իրենց գիտելիքներն ու կարողությունները:

Մեծահասակների կրթությունը ողջ կյանքի ընթացքում ուսումնառության կենսական տարրերից մեկն է: Սակայն մեծահասակների մասնակցությունը կրթությոանը ոչ միայն սահմանափակ է, այլև հավասարակշված չէ: Նրանք, ովքեր ունեն ամենացածր կրթական որակավորում, ամենաքիչն են ցանկանում մասնակցել ուսումնառությանը: Եթե համեմատենք Անդամ- երկրների համաձայնեցված՝ ուսումնառությանը աշխատելու տարիքի հասած մեծահասկաների մասնակցության ներքին շեմը, որը մինչև 2010թ. համար սահմանված է 12.5%, ապա 2006թ. միջին թիվը կազմում է 9.6%, որը տարբեր երկրներում տատանվում էր 1.3-29%-ի միջակայքում:

Որպեսզի լուծում տրվի այս խնդրին, ինչպես նաև այլ մարտահրավերներին, որոնց հանդիպում է Եվրոպան, ինչպես, օրինակ, ժողովրդագրական փոփոխությունները, աշխարհի այլ մասերում կտրուկ զարգացումները և սոցիալական ներգրավվածությունն ու աղքատությունը, Հանձնաժողովը 2006թ. հրապարակեց “Մեծահասկաների կրթություն. երբեք ուշ չէ սովորել” Հաղորդագրությունը:[16] Այն ընդգծում է մեծահասկաների կրթության կարևորությունը մեծահասկաների աշխատելու հնարավորությանը, աշխատաշուկայում նրանց շարժականությանը, առանցքային հմտությունների ձեռքբերմանը աջակցելու գործում՝ միաժամանակ խթանելով սոցիալական լայն ընդգրկվածություն ունեցող աշխատաշուկան և հասարակությունը:

2007թ. սեպտեմբերին Հաղորդագրությանը հետևեց Գործողությունների պլանը[17], որը սահմանում էր, թե Անդամ-երկրներն ու եվրոպական մակարդակով աջակցություն ստացող այլ մասնակիցներն ինչպես կարող են զարգացնել մեծահասակների կրթության արդյունավետ համակարգերը:

---

[16] http://eur-lex.europa.eu/LexUriServ/site/en/com/2006/com2006_0614en01.pdf

[17] http://ec.europa.eu/education/policies/adult/com558_en.pdf

Էական է մեծահասակների կրթությանը մասնակցության աճը և կրթությունն առավել անաչառ դարձնելը: Պետք է բարձրացնել որակի կուլտուրան՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով սովորողներին, անձնակազմի մասնագիտական զարգացմանը, դասավանդողներին և տարածմանը: Մեծահասկաներին դեպի կրթությունը դրդելու համար էական նշանակություն ունի ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչման և վավերացման համակարգերի իրականացումը: Եվ վերջապես, մեծահասակների կրթության արդյունքների որակը և համեմատելիությունը պետք է զարգացվի՝ որպես հետագա քաղաքականության մշակման հիմք:

Ներածություն. Գրունդտվիգ ծրագրի հատուկ և գործառնական նպատակները

Գրունդտվիգ ծրագրի հատուկ նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 29.1-ում, հետևյալն են.
(ա) պատասխանել Եվրոպայում տարեց բնակչության կրթական մարտահրավերներին;
(բ) օգնել, որպեսզի մեծահասակներն ապահովվեն գիտելիքներն ու կարողությունները զարգացնելու միջոցներով:

Գրունդտվիգ ծրագրի գործառնական նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 29.2-ում, հետևյալն են.
(ա) բարձրացնել մեծահասակների կրության մասնակից անհատների որակը և նրանց շարժողականությունը Եվրոպայում, ինչպես նաև մեծացնել ծավալներն այնպես, որ միչև 2013թ. աջակցեն տարեկան առնվազն 7000 նման անհատների շարժականությանը;
(բ) բարձրացնել որակը և մեծացնել ողջ Եվրոպայում մեծահասկաների կրթության մեջ ներգրավվածների միջև համագործակցության ծավալները;
(գ) աջակցել խոցելի սոցիալական խմբերին և սահմանային սոցիալական խավին, մասնավորապես՝ ծերերին և այն մարդկանց, ովքեր կրթությունը թողել են առանց հիմնական որակավորման, որպեսզի նրանց տրվի մեծահասակների կրթությանը մասնակցելու այլընտրանքային հնարավորություն;
(դ) հեշտացնել մեծահասակների կրթության ոլորտում նորարարական պրակտիկայի զարգացումը և դրա փոխադրումը մասնակից մի երկրից մյուսը;
(ե) աջակցել նորարարական ICT-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և պրակտիկայի զարգացմանը ողջ կյանքի ընթացքում ուսումնառության գործընթացում;
(զ) զարգացնել մեծահասակների կրթության կազմակերպությունների ղեկավարումը և մանկավարժական մոտեցումները:

Գրունդտվիգ ծրագրի գործողությունների առաջնայնությունները

4.1 Շարժականություն և մասնակցություն

Շարժականություն. Աշխատակազմի համար ներքին ծառայողական վերապատրաստումների շնորհներ

Առաջնայնության որևէ թեմա չկա:

Մասնակցությունը

Առաջնայնության որևէ թեմա չկա:

4.2 Բազմակողմանի ծրագրեր

Աջակցություն կցուցաբերվի այն նածագծերին, որոնք կզարգացնեն նորարարությունը և/կամ կտարածեն նորամուծություններով արդարացված ազդեցությամբ պրակտիկան:

4.2.1. Առաջնայնություն 1. Առանցքային հմտություններ[18]

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է բարձրացնեն կոնկրետ և տարածվելու ունակ միջոցներ (մեթոդներ, գործիքներ, նյութեր)՝ ուշադրությունը սևեռելով հետևյալ ոլորտներին.

- ընդլայնել այնպիսի հիմնական հմտությունների մատչելիությունը, ինչպիսիք են՝ գրագիտություն, օտար լեզուներով հաղորդակցություն, մաթեմատիկական կարողություններ, գիտության և տեխնոլոգիաների հիմնարար կարողություններ և թվային կարողություններ
- օգնել սովորողներին զարգացնել բազմաճյուղային կարողությունները, ինչպիսիք են սոցիալական, քաղաքացիական, մշակութային և միջմշակութային կարողությունները և ձեռնարկչությունը, որպեսզի հարմարվեն փոփոխվող հասարակությանը և աշխատաշուկայի պահանջներին;
- բարձրացնել մեծահասակների ինքնավստահությունը և խթանել նրանց անձնական առաջխաղացումը՝ զարգացնելով նրանց մշակութային տեղեկացվածությունը և ստեղծագործական արտահայտության կարողությունը

4.2.2. Առաջնայնություն 2. Մեծահասակների կրթության որակի բարձրացում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է բարձրացնեն կոնկրետ և տարածվելու ունակ միջոցներ (մեթոդներ, գործիքներ, նյութեր)՝ ուշադրությունը սևեռելով հետևյալ ոլորտներին.

- զարգացնել ուսուցիչների, թրեյներների և մնացած աշխատակազմի՝ կրթության հանդեպ պահանջների նույնականացումը;
- զարգացնել միասնական մոտեցումը՝ բարձրացնելու ուսուցիչների, կրկնուսույցների և մեծահասակների կրթության մնացած անձնակազմի որակավորման որակը և արդյունքում վերամշակել նրանց ուսուցումը;

---

[18] Հանձնարարական 2006/962/EC Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 18 դեկտեմբեր 2006 ողջ կյանքի ընթացքում ուսումնառության առանցքային հմտությունների վերաբերյալ, OJ L 394/10, 30.12.2006. Ութ առանցքային հմտություններն են. 1.Հաղորդակցություն մայրենի լեզվով; 2.Հաղորդակցություն օտար լեզուներով; 3.Մաթեմատիկական կարողություններ և առանցքային հմտություններ գիտության և տեխնիկայի ոլորտում; 4.Թվային տեխնիկայի կարողություններ; 5.Սովորել սովորել; 6.Սոցիալական և քաղաքացիական կարողություններ; 7.Նախաձեռնության և ձեռնարկչության ձիրք; 8.Մշակութային տեղեկացվածություն և արտահայտչություն

- առավել ինտենսիվ դարձնել տեղական և տարածաշրջանային համագործակցությունը “կրթվող տարածություն” հասկացության մեջ ներառված՝ մեծահասակների կրթական կազմակերպությունների և կրթություն ապահովող այլ կազմակերպությունների և ձեռնարկությունների միջև;
- զարգացնել ծառայությունների և հաստատությունների որակի հավաստումը, ինչպես նաև ուսումնասիրել, թե ինչպես կարող է մեծահասակների կրթությանը վերաբերվել մասնագիտական ուսուցման Եվրոպական որակի հավաստման շրջանակը:

4.2.3. Առաջնայնություն 3. Մեծահասակների կրթության գրավչության և մատչելիության բարձրացում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է բարձրացնեն կոնկրետ և տարածվելու ունակ միջոցներ (մեթոդներ, գործիքներ, նյութեր)՝ ուշադրությունը սևեռելով հետևյալ ոլորտներին.

- անհատ սովորողներին դրդել՝ մասնակցելու կրթությանը՝ նաև ուղղորդման ծառայության, տեղեկատվության բարձրացման քարոզչության և ձեռնարկությունների հետ համագործակցության միջոցով;
- մեծահասակների կրթության մատչելիությունը բարձրացնելու համար ICT-ի և համացանցային (ինտերնետային) ուսուցման կիրառում;
- մեծացնել մեծահասակների կրթությամբ ստացված որակավորման թափանցիկությունը և կիրառումը, ինչպես նաև հեշտացնել մասնագիտական, ընդհանուր և բարձրագույն կրթության մատչելիությունը:

4.2.4. Առաջնայնություն 4. Մեծահասակների կրթության գրավչության և մատչելիության բարձրացում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է սևեռեն իրենց ուշադրությունը մեթոդների, գործիքների և նյութերի արտադրության, փորձարկման և իրականացման վրա, որպեսզի.

- մեծանա ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների վավերացումը՝ հաշվի առնելով մեծահասակ սովորողների տարբեր պահանջները;
- բարձրացնել մեծահասակների կրթության պրակտիկաների ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերականությունը;
- զարգացնել այն հարցը, թե արդեն գոյություն ունեցող շրջանակներն ու սկզբունքները ինչպես կարող են համապատասխանել մեծահասակների կրթությանը՝ ի պատասխան մեծահասակների հատուկ պահանջների;
- միգրանտների ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման և կարողությունների գնահատման մեխանիզմների նույնականացում ու տարածում:

4.2.5. Առաջնայնություն 5. Սահմանափակ հնարավորություններ և ֆիզիկական խնդիրներ ունեցող քաղաքացիների և միգրանտների համար մեծահասակների կրթության խթանում

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է բարձրացնեն կոնկրետ և տարածվելու ունակ միջոցներ (մեթոդներ, գործիքներ, նյութեր)՝ ուշադրությունը սևեռելով հետևյալ ոլորտներին.

- սահմանափակ հնարավորություններ կամ ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդկանց հասարակությանը և աշխատաշուկային ինտեգրվելու համար այլընտրանքային մոտեցումների զարգացում;
- միջմշակութային կրթության փորձի փոխանակում, սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց լեզվական, սոցիալական և մշակութային ինտեգրացիա;
- սահմանափակ հնարավորություններ և ֆիզիկական խնդիրներ ունեցող քաղաքացիներին կրթական հնարավորություններ ընձեռելու համար սպորտի կիրառում:

4.2.6. Առաջնայնություն 6. Հետագա կյանքում ուսանում և ուսուցանում; Միջսերնդային և ընտանեկան կրթություն

Այս առաջնայնությամբ նախագծերը պետք է բարձրացնեն կոնկրետ և տարածվելու ունակ միջոցներ (մեթոդներ, գործիքներ, նյութեր)՝ ուշադրությունը սևեռելով հետևյալ ոլորտներին.

- մեծահասակ քաղաքացիների համար կրթության համար գիտելիքի, մեթոդների և լավ պրակտիկայի փոխանցում;
- ավագ սերնդի ներկայացուցիչներին անհրաժեշտ հմտությունների ապահովում այնպես, որ նրանք կարողանան համընթաց քայլել փոփոխություններին և ակտիվ մնալ հասարակության մեջ;
- տարեց մարդկանց կողմից մնացած սովորողների համար կատարված ներդրումների ուժեղացում;
- միջսերնդային և ընտանեկան կրթության համար նորարար մոտեցումների զարգացում:

4.3 Ցանցային աշխատանքներ

4.3.1 Առաջնայնություն 1. Մեծահասակների կրթության մեջ լեզուների ուսանում

Այս առաջնայնությամբ ցանցային աշխատանքները պետք է իրենց ուշադրությունը սևեռեն հետևյալի վրա.

- մեծահասակների համար լեզու սովորելու հնարավորությունների լավագույն պրակտիկայի տարածում և գիտելիքների փոխանցում;
- մեծահասակների համար լեզուների ուսանման վերբերյալ եվրոպական համագործակցության ներկա, հրատապ և ապագա պահանջների սահմանազատում;
- մեծահասակների կողմից լեզուներ սովորելու բացերը լրացնելուն ուղղված ռազմավարության զարգացում այնտեղ, որտեղ ուսուցանումը տվյալ պահին համապատասխան չի;
- մեծահասակների կրթության աշխատակազմի միջմշակութային կարողություններն ամրապնդելու համար մշակված ռազմավարության, սխեմաների և նյութերի զարգացում;
- մեծահասակներին լեզու սովորեցնող մարդկանց ուսուցման վերաբերյալ սխեմաների և նյութերի տարածում:

4.3.2 Առաջնայնություն 2. Մեծահասակների կրթության մեջ ակադեմիական ցանցային աշխատանքներ

Այս առաջնայնությամբ ցանցային աշխատանքները պետք է խթանեն մեծահասակների ուսումնառությունը և մեծահասակների կրթությունն ապահովողների և մասնագիտական պրակտիկայով զբաղվողների վերաբերյալ ուսուցման և հետազոտության միջև ցանցային աշխատանքները և նրանց առավել սերտ համագործակցությունը: Նրանք պետք է սևեռեն իրենց ուշադրությունը հետևյալի վրա.

- ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ընդհանրապես և մեծահասակների կրթության՝ մասնավորապես, օրակարգի եվրոպական ուսուցման և հետազոտման պահանջների ուսումնասիրություն և վերլուծություն;
- համալսարանական մակարդակով շարունակական կրթության ուսումնասիրության ներկա և ապագա միտումների ուսումնասիրում, վերլուծում և քննարկում;
- ակադեմիական ցանցային աշխատանքների ֆինանսավորման համար արդյունավետ մոդելների հստակեցում;
- մեծահասակների կրթության ոլորտում գործող բուհերի միջև ցանցային աշխատանքների և առավել սերտ համագործակցության սահմանում, հաստատում և խթանում;
- մեծահասակների կրթության ոլորտում որակի հավաստման և ձեռքբերման գործիքների զարգացում, փորձարկում և խթանում;
- մեծահասակների կրթության սեկտորում ազգային բարեփոխումների իրականացման վերլուծություն;
- բուհերի, եվրոպական մակարդակի ասոցիացիաների և մեծահասակների կրթությանն առնչվող հետազոտության և զարգացման աշխատանքներ կատարող այլ մարմինների միջև համագործակցության և համատեղ աշխատող կառուցվածքների զարգացում:

4.3.3 Առաջնայնություն 3. Շահագրգիռ կողմերի ցանցային աշխատանքներ մեծահասակների կրթության ոլորտում

Այս առաջնայնությամբ ցանցային աշխատանքները պետք է սևեռեն իրենց ուշադրությունը հետևյալի վրա.

- համագործակցության ամրապնդում մեծահասակների կրթությունն ապահովող հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, սոցիալական գործընկերների և տեղական, տարածաշրջանային, ազգային, եվրոպական մակարդակով որոշում կայացնողների միջև;
- Եվրոպայում մեծահասակների կրթության լավագույն պրակտիկայի տարածում և ինֆորմացիայի փոխանակում;
- մեծահասակների կրթության և ուղղորդման եվրոպական համագործակցության ներկա, հրատապ և ապագա պահանջների սահմանում;
- ուսումնառությունը մեծահասակների մասնակցության աճն ապահովող մեթոդների և փորձի ուսումնասիրում:

4.3.4 Առաջնայնություն 4. Վավերացում և սերտիֆիկացում

Այս առաջնայնությամբ ցանցային աշխատանքները պետք է սևեռեն իրենց ուշադրությունը հետևյալի վրա.

- ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթության արդյունքների վավերացման բարեկարգում՝ հաշվի առնելով մեծահասակ սովորողների տարբեր պահանջները;
- մեծահասակների կրթության մասնավոր պրակտիկայով զբաղվողների ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման զարգացում;
- ուսումնասիրել, թե առկա շրջանակներն ու սկզբունքները ինչպես կարող են համապատասխանեցվել մեծահասակների կրթությանը՝ մեծահասակների հատուկ պահանջների համապատասխան;
- միգրանտների ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչման և կարողությունների գնահատման մեխանիզմների սահմանում և տարածում:

ԳԼՈՒԽ 2 – ԲԱԶՄԱՃՅՈՒՂ ԾՐԱԳԻՐ

<u>Բազմաճյուղ ծրագրի հատուկ և գործառնական նպատակները</u>

Բազմաճյուղ ծրագրի հատուկ նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 32.1-ում, հետևյալն են.
(ա) խթանել եվրոպական համագործակցությունը այն ոլորտներում, որոնք պարունակում են 2 կամ ավելի սեկտորային ենթածրագրեր;
(բ) խթանել Անդամ- երկրների կրթության և թափանցկությունը:

Ըստ ծրագրի մասին Որոշման Հոդված 32.2-ի՝ Բազմաճյուղային ծրագրի գործառնական նպատակներն են.
(ա) աջակցել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության քաղաքականության զարգացմանը և եվրոպական մակարդակով համագործակցությանը, մասնավորապես՝ Լիսաբոնյան գործընթացի և Կրթության և ուսուցման 2010թ. աշխատանքային ծրագրի, ինչպես նաև Բոլոնիայի և Կոպենհագենյան գործընթացների և նրանց հաջորդների համատեքստում;
(բ) ապահովել համապատասխան համեմատելի ինֆորմացիա, վիճակագրություն և վերլուծություն՝ ամրապնդելու համար ողջ կյաքնի ընթացքում ուսումնառության քաղաքականության զարգացումը, ինչպես նաև վերահսկելու ողջ կյանքի ընթացքում ուսումնառության նպատակների առաջընթացը և սահմանել հատուկ ուշադրության ոլորտներ;
(գ) խթանել լեզուների ուսանումը և աջակցել Անդամ-երկրներում լեզվական բազմազանությունը;
(դ) աջակցել նորարարական ICT-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և պրակտիկայի զարգացմանը ողջ կյանքի ընթացքում ուսումնառության գործընթացում;
(ե) համոզվել, որ Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ծրագրի արդյունքները համապատասխանաբար ճանաչվծա են և իրականացված են հավասարաչափ:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շարժականություն (ուսումնական այցեր)

Այս գործունեությունը կենտրոնացված է ԵՄ մակարդակով ընդհանուր հետաքրքրության հարցերի քննարկումների, փոխանակման և ուսումնասիրման վրա՝

խթանելով կրթության և ուսուցման համակարգերի թափանցիկությունը և մոտեցումների որակը:

Ուսումնական այցերի ծրագիրը կհետևի կրթության և ուսուցման ծրագրի առաջնայնություններին, ինչպես նաև Անդամ-երկրների կողմից սահմանված առաջնայնություններին: Ավելին, հատուկ ուշադրություն կհատկացվի այս թեմաների և 2010թ. աշխատանքային ծրագրի նպատակների միջև կապերի ստեղծմանը:

Ուսումնական այցերի առաջնային թեմաներն են.
- փաստերով հիմնավորված քաղաքականության մշակում և փորձ
- եվրոպական գործիքների իրականացման հանդեպ նորարար մոտեցումներ
- սոցիալական ընդգրկվածության և ինտեգրման խնդիրներ
- աշխատանքի վայրում ուսումնառություն
- կրթության և ուսուցանման գործընթացում մեծահասակների մասնակցության թվի բարձրացում (օր.՝ սոցիալական գործընկերների հետ համագործակցություն)
- կրթական և աշխատանքային քաղաքականության իրականացման գործիքների ինտեգրում ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ռազմավարության մեջ
- ստեղծագործական հմտությունները կրթության և ուսուցման մեջ ներդնելու նորարարական մոտեցումներ
- տնտեսական փոփոխությանը և ակտիվ հասարակության առավել տարիքով ներկայացուցիչների ուղղորդում և մասնագիտական ուսուցում

Դասընթացներ և համեմատական հետազոտություն

Այս գործողության նպատակներն են՝ կատարել ԵՄ-ում կրթական համակարգերի համեմատական վերլուծություն, որի նպատակն է ապահովել համապատասխան համեմատական ինֆորմացիա, վիճակագրություն և վերլուծություն՝ ամրապնդելու համար ողջ կյաքնի ընթացքում ուսումնառության քաղաքականության զարգացումը, ինչպես նաև վերահսկելու ողջ կյանքի ընթացքում ուսումնառության նպատակների առաջընթացը և սահմանել հատուկ ուշադրության ոլորտներ:
Կրթության և ուսուցման մեջ պրակտիկայի և քաղաքականության համար փաստարկված հիմքերի ամրապնդման համեմատական հետազոտության առաջնայնության թեմաները հետևյալն են.
- Թեմա 1. Բարձրագույն կրթության մեջ առաջադիմության, արդյունավետության և հավասարության խթանում, ուսանողների հասանելիություն և պահպանում
- Թեմա 2. Մեծահասակների կրթության ապահովման հետագա զարգացում. նույնականացում, կազմակերպության մեջ որակի գնահատում և խթանում, մեծահասակների կրթության կառավարում և ֆինանսավորում
- Թեմա 3. Նախադպրոցական և պարտադիր կրթության մեջ առանցքային հմտությունների ձեռքբերման վերաբերյալ թերությունների մատնանշում

- Թեմա 4. Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) գրավչության և որակի խթանում. ՄԿՈՒ համակարգերի կառավարում և ՄԿՈՒ-ի, բարձրագույն կրթության և աշխատանքի միջև կապերի ընդլայնման զարգացում
- Թեմա 5. Ուսումնառության գործընթացում ստեղծագործական գործունեության դերը և դրա ազդեցությունը մարդկանց նորարարական կարողությունների վրա

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 2. ԼԵԶՈՒՆԵՐ

Ներածություն. Քաղաքականության համատեքստ

Եվրոպայում լեզվական բազմազանությունը կյանքի անբաժանելի մի մասն է: ԵՄ-ի նպատակն է մեր մշակույթներին բնորոշ այս հիմնական առանձնահատկության պահպանումը և խթանումը: Լիսաբոնյան ռազմավարության վերահսկամն գործընթացում և Կրթության և ուսուցման 2010թ. աշխատանքայի ծրագրում օտար լեզուներով հաղորդակցվելու կարողությունը համարվում է առանցքային հմտություն: Պրակտիկ լեզվական և միջմշակութային կարողություններով աշխատուժը օգնում է եվրոպական ձեռնարկությունների մրցունակությանը գլոբալ շուկայում, բարձրացնում է աշխատողներ վարձելու հնարավորությունները, ինչպես նաև այն էական դեր է խաղում տնտեսական աճի և առավել լավ աշխատատեղերի համար: Բազմալեզվությունը նաև ուժեղացնում է զարգացումը և եվրոպական քաղաքացիությունը, ամրապնդում է սոցիալական համախմբվածությունը և խթանում է միջմշակութային երկխոսությունը՝ հնարավորություն ստեղծելով բացահայտել այլ արժեքները, հավատները և վարքը:

Լեզուների ուսանումն ու լեզվական բազմազանության խթանումը ընդհանուր ծրագրային, մասնավորապես՝ Կոմենիուս, Էրասմուս, Գրունդտվիգ և Լեոնարդո ծրագրի նպատակն է: “Լեզուներ” Հիմնական գործունեությունը լրացնում է այս սեկտորային ծրագրերը՝ լեզուների ուսուցման և ուսանման անհրաժեշտությունը հասցեագրելով այդ սեկտորներից 2-ին կամ ավելիին: Բոլոր լեզուներն էլ նախընտրելի են ծրագրի համար:

Հիմնական գործունեություն 2. Լեզուներ գործողության առաջնայնությունները

2.1 Բազմակողմանի նախագծեր

Այս բազմաճյուղ նախագծերը պետք է լրացնեն նախորդ 4 ծրագրերից առնվազն 2-ը, և պետք է իրենց ուշադրությունը սևեռեն լեզուների ուսուցանման առավելությունների, ԵՄ-ի բազմալեզու բնույթի մասին տեղեկատվության տարածման վրա, ինչպես նաև լեզուների ուսանման ռեսուրսների մատչելիության, լեզուներ սովորելու նյութերի, այդ թվում՝ օն-լայն կուրսերի և լեզուների ստուգման գործիքների զարգացման և տարածման վրա: Անհրաժեշտ ցանկացած դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել Եվրոպական Խորհրդի Լեզուների ընդհանուր շրջանակը:

Առաջնայնությունը կտրվի այն առաջարկներին, որոնք ուղղված են հետևյալ թեմաներից մեկին կամ մի քանիսին.

- առավել քիչ օգտագործվող եվրոպական լեզուների կարողությունների ձեռքբերման խթանում և / կամ դրանց մասին տեղեկատվության բարձրացում
- Եվրոպական միջմշակութային երկխոսության զարգացման նպատակով լեզվական կարողությունների ձեռքբրեման խթանում

- աշխատաշուկային համապատասխան լեզվական կարողությունների բարձրացում, որի նպատակն է մեծացնել ձեռնարկություններում անհատների ինտեգրումը և բարձրացնել եվրոպական մրցակցությունը
- մեթոդների զարգացում և խթանում, ինչի նպատակն է լեզու սովորողների համար դրդապատճառներ ստեղծելը և լեզու սովորելու նրանց ունակության բարձրացումը:

2.2 Ցանցային աշխատանքներ

Այս բազմաշերտ ցանցային աշխատանքը նպաստում է Եվրոպայում լեզուների քաղաքականության զարգացմանը: Դրանք խթանում են լեզուների ուսանումը և լեզվական բազմազանությունը, աջակցում են նորարարական տեխնիկայի և լավ պրակտիկայի մասին ինֆորմացիայի փոխանակմանը հատկապես որոշում ընդունողների և հիմնական կրթական մասնագետների միջև, ինչպես նաև ընդունում և տարածում են նախկին նախագծերի արդյունքները պոտենցիալ վերջնական օգտագործողներին (հասարակական իշխանություններ, բիզնես, լեզու սովորողներ և այլն):

Առաջնայնությունը կտրվի այն առաջարկներին, որոնք ուղղված են ներքոնշյալ թեմաներից մեկին կամ մի քանիսին.

- լեզուների ուսանման և ուսուցանման միջոցով Եվրոպայում միջմշակութային երկխոսությունը զարգացնելու նպատակով լավ պրակտիկայի մասին ինֆորմացիայի զարգացում, տարածում և նույնականացում
- ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության բոլոր մակարդակներում լեզուների ուսանումը և լեզվական բազմազանությունը խթանող քաղաքականության համաձայնեցվածության զարգացում և խթանում
- հատուկ կարիքներ ունեցող մարդկանց լեզու սովորեցնելու լավագույն պրակտիկայի ընդունում , փոխանակում և կառուցում:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 3. ICT

Ներածություն. Քաղաքականության համատեքստ

Կրթության մեջ ICT-ի խթանման ծրագիրն ընդհանրապես և Կոմենիուս, Էրասմուս և Գրունդտվիգ ծրագրի համար՝ մասնավորապես, "ICT" Հիմնական գործունեությունը լրացնում է վերոնշյալ ծրագրերը՝ ներկայացնելով ICT-ն որպես կրթական պահանջ այդ սեկտորներից 2-ում կամ ավելիում:

Այն կենտրոնացված է ICT-ի հնարավորությունների վրա՝ որպես կատալիզատորի: Այն ոչ թե տեխնոլոգիայի մասնի է, այլ այն մասին, թե ինչպես կարող է ուսումնառությունն ապահովվել ICT-ի միջոցով (օր.՝ բացահայտումների ուսումնասիրություն; ձեռքբերումների վերադարձը դեպի ուսումնառություն; դպրոցական միջավայրից դուրս ուսումնառության ապահովում; ողջ կյանքի ընթացքում ճկուն ուսումնառություն՝ թվային տեխնիկայի պակասը լրացնելու համար):

Կրթության ոլորտում ICT-ի առնչությամբ էական առաջընթացն Անդամ-երկրներում նկատելի դարձավ Լիսաբոնից հետո: Գրեթե բոլոր կրթական և ուսումնական հաստատությունները զինված են և ցանցային աշխատանքներ են կատարում ICT-ի միջոցով: Այդուհանդերձ, շատ ավելին է պետք անել, որպեսզի օգտագործվի ICT-ի ողջ հնարավորությունը՝ նպաստելու մանկավարժական զարգացումներին, ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համընդհանուր մատչելիությանը, ինչպես նաև առաջադեմ կրթական համակարգերի կառավարմանը: Սա առավելագույնի կհասցնի ICT-ի նախկին ներդրումների օգուտները:

Հիմնական գործունեություն 3. ICT-ի գործողության առաջնայնությունները

3.1Բազմակողմանի նախագծեր

Առաջնայնությունը տրվելու է հետևյալ թեմաներին.

3.1.1 Առաջնայնություն 1. Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության, մասնավորապես՝ բացառման վտանգի տակ գտնվող խմբերի համար ICT-ի նորարարական սահմանումը և իրականացումը

ICT-ն անհատներին հնարավորություն է տալիս իրականացնել իրենց սոցիալական ցանցային աշխատանքը, և դա էլ կարող է ապահովել նրանց ուսումնառությունը: Ուսումնառությունն առավելապես սոցիալական գործընթաց է: Ինքնուսուցումը և ինֆորմալ հավասար ուսումնառությունը կարևոր ուղիներ են ինտերնետային հմտություններն ու թվային տեխնիկայի հետ աշխատելու կարողությունները զարգացնելու համար: Բայց դրանք ավելի ու ավելի կարևոր են դառնում նաև պաշտոնական ուսումնառության համար: Գնալով ավելի է մեծանում ICT-ի վրա հիմնված սոցիալական համացանցային գործիքների և պլատֆորմների ("Web 2.0" և ICT-ի այլ զարգացումներ) նոր սերնդի հեղինակությունը: Դրա վառ օրինակներն են վեբլոգերը (weblogs), վիկիները (wiki), փոդքասթերը (podcasts), սոցիալական ծրագրերը, վիրտուալ սոցիալական կայքերը, ինչպես նաև այնպիսի գործիքները, ինչպիսիք են

բջջային հեռախոսները: Դրանք շատ հեշտ է օգտագործել, մատչելի են և լայնորեն տարածված, մասնավորապես՝ բացառման վտանգի տակ գտնվող անհատների համար (նախկին շրջանավարտները, ազգային փոքրամասնությունները, տարեց մարդիկ և այլն), ուստի հնարավորություն են ընձեռում վերոնշյալ խմբերին՝ (վերա)միավորվելու հանրային ծառայություններին, ուսումնառության և քաղաքացիական գործունեությանը:

Նախագծերը պետք է ներառեն հետևյալը.

- այս նոր գործիքներին ու միջոցներին առնչվող փորձնական կրթական մոտեցումների զարգացում և իրականացում՝ ներառյալ ուսումնառության արդյունքների, սովորողների վարքի ու վերաբերմունքի և կրթական քաղաքականության առավել լայն նպատակների՝ որակի հավասարության, արդյունավետության, հանդուրժողականության և այլնի վրա դրանց ազդեցության վերլուծությունը:
- առկա պրակտիկայի համեմատական վերլուծություն՝ պարզելու լավ պրակտիկան և հաջողություն ապահովող գործոնները, որոնք հնարավոր է փոխադրել:

3.1.2 Առաջնայնություն 2. ICT-ն որպես ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ոլորտում նորարարության և ստեղծարարության կատալիստ

Նորարարության հմտությունների ուժեղացումը պահանջում է ակտիվ ուսումնական մոտեցումների այնպիսի նոր ուսումնական և ուսուցման մոտեցումներ և ռազմավարություն, ինչպիսիք են խնդիրների կառուցողական լուծումը, բացահայտումները, սովորելը և կյանքի կոչելը, փորձառնական կրթությունը, քննադատական մտածողությունը և ստեղծարարությունը: ICT-ի ընձեռած ուսումնառությունը կարող է արդյունավետորեն նպաստել այս նորարարական մոտեցումներին: Նախագծերը պետք է զարգացնեն նորարարական կրթական մոտեցումները ուսումնական հմտություններն ընդլայնելու և նորարարական կարողությունները խթանելու համար:

Առավելությունը կտրվի այն նախագծերին, որոնք կսահմանեն և կօգտագործեն ICT-ի ընձեռած կրթական լուծումները՝ անդրադառնալով ներքոնշյալ թեմաներից մեկին կամ ավելիին.

- ուժեղացնել ստեղծարարությունը, որտեղ սովորողը կարող է սովորել ստեղծարար արտահայտմամբ, քննադատական և լայն մտածողությամբ՝ ստեղծելու նոր գաղափարներ և նորարարական լուծումներ;
- ուժեղացնել պահանջի վրա հիմնված և խնդիրներ լուծող մոտեցումները, որտեղ սովորողը կարող է “կատարելով սովորել”՝ իրական և / կամ վիրտուալ միջոցներով փորձեր կատարելով;
- աջակցել ինքնուրույն, անկախ ուսումնառությանը՝ այն իմաստով, որ սովորողները կարող են իրենց գիտելիքն անմիջապես վերածել փորձի;

- աջակցել համատեղ, խմբակային ուսումնառությանը, որն ուղղված կլինի կոմպլեքս խնդիրներին, որոնք պահանջում են կառուցողական և նորարարական լուծումներ:

3.2 Ցանցային աշխատանքներ

Առաջնայնությունը կտրվի հետևյալ թեմաներին առնչվող ցանցային աշխատանքներին.

3.2.1 Առաջնայնություն 1. Բազամակողմանի ուղղվածությամբ խնդիրներին ուղղված՝ սովորող համայնքներին ICT-ի միջոցով միմյանց կապելու նորարարական ճանապարհով

Սովորող համայնք հասկացությունը դառնում է գործառնական՝ հիմնվելով դպրոցի, տան, աշխատավայրի և տեղական համայնքների միջև ամուր կապերի վրա: Այն դառնում է Եվրոպայում հաստատվող ICT-ի նոր ծառայությունների և ենթակառուցվածքների կեբնտրոնական մասը:

Առաջնայնությունը կտրվի հետևյալ թեմաներից մեկին կամ ավելիին առնչվող ցանցային աշխատանքների առաջարկներին.

- գիտելիքի տարածում և մասնակցություն՝ ներառելով ICT-ի ապահոված կրթական ոլորտում առկա դերակատարներին՝ ընդգրկելով և՛ պահանջող, և՛ ապահովող կողմերին (օր.՝ և՛ հրատարակողները, և՛ ադ-հոք ծավալներ ընդլայնողները);
- խորհրդատվության և աջակցության տրամադրում այն բազմաշերտ խնդիրներին, որոնք վերաբերում են պաշտոնական, ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջոցների ծառայությունների թվայնացված մասին, ինչպես օրինակ, IPR-ի վերաբերյալ իրավական հարցերը, որակի չափանիշները, e-գնահատումը և e-պորտֆոլիոները;
- առավել լայն կրթական նորարարության զարգացում, ինչը հիմնված կլինի ICT-ի կարողությունների վրա, որպեսզի աջակցություն ցուցաբերվի նոր մանկավարժական մեթոդներին և դրանց ընդգրկմանը սոցիալական և տնտեսական փոփոխություններում, աջակցելու սովորելու նոր հմտություններին և փոխելու կառավարումը:

3.2.2 Առաջնայնություն 2. ICT-ի, ստեղծարարության և նորարարության միջև կապերի ամրապնդում

Մի շատ կարևոր կապ կա կրթության և ուսուցման ոլորտում ICT-ի զարգացումների և այն նոր հնարավորությունների միջև, որոնք առաջարկվում են դրանց կողմից՝ Եվրոպայում անհատների, խմբերի և կազմակերպությունների մոտ ստեղծարարությունը և նորարարությունը զարգացնելու համար:

Առաջնայնությունը կտրվի ցանցային աշխատանքների այն աաջարկներին, որոնք ուղղված են ներքոնշյալ թեմաներից մեկին կամ մի քանիսին.

- գիտելիքի տարածում և ICT-ի կիրառմամբ ստեղծագործությունն ու նորարարությունը զարգացնելուն ուղղված փորձարարական մոտեցումների իրականացում;

- խորհրդատվություն և աջակցություն տվյալ ոլորտում գործող հաստատություններին և փորձ ձեռքբերողներին;
- լավ պրակտիկայի տարածում և նորարարական կարողություններն ամրապնդող ուսուցման և ուսանման մոտեցումների փորձառնական դասընթացների ապահովում;
- հրապարակայնություն և տեղեկացվածության մակարդակը բարձրցնող գործողություններ, շահագրգիռ կողմերի միջև երկխոսության հեշտացում և աջակցություն եվրոպական արդյունքների տարածմանը:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 4. – ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

”Արդյունքների տարածում և ուսումնասիրում” Հիմնական գործունեությունն ազդում է թե՛ որոշում ընդունողների, թե՛ իրականացնողների մոտ աճող տեղեկացվածության վրա այն մասին, որ անհրաժեշտ է ապահովել առավելագույն արդյունք ԵՄ կողմից ֆինանսավորվող նախագծերից և գործունեությունից, որոնց աջակցում են Լիսաբոնյան վերանայված օրակարգը և Կրթության և ուսուցման 2010թ. աշխատանքային ծրագրի տարածումը: Այս գործունեության առաջնային նպատակն է օգնել ստեղծել արդյունքների արդյունավետ հետազոտման շրջանակ՝ տեղական, սեկտորային, ռեգիոնալ, ազգային և եվրոպական մակարդակներում: Այս հիմնական գործունեությամբ հովանավորվող գործողությունը նպաստում է սեկտորային ծրագրերի և այլ հիմնական գործողությունների հատուկ արդյունքների տարածմանը և ուսումնասիրմանը:

Առավելությունը կտրվի այն նախագծերին, որոնք կառաջարկեն ողջ կյանքի ընթացքում ուսումնառության 2 կամ ավելի սեկտորներին ինտեգրված մոտեցում, կներառեն հիմնական որոշում ընդունողներին և / կամ սեկտորային, ռեգիոնալ, ազգային և / կամ եվրոպական մակարդակով նշանակալի ազդեցության պոտենցիալ կունենան:

4.1 Բազմակողմանի նախագծեր

Ավելությունը կտրվի այն նախագծերին, որոնք կենտրոնացված են հետևյալ հարցերի վրա.

- արդյունքների հետազոտումը հեշտացնելու համար համապատասխան ենթակառուցվածքի (վերլուծություն, մեխանիզմներ, մեթոդոլոգիաներ և պրակտիկ գործիքներ) զարգացում;
- բազմաշերտ գործունեություն եվրոպական մակարդակում (ըստ սեկտորի, թեմայի կամ օգտվող խմբի);
- “արդյունքների հետազոտման” խթանում առկա հիմնական ցանցերի և համապատասխան կազմակերպությունների կողմից, որոնց նպատակն է արդյունքների փոխադրումը և իրականացումը (բազմացումը) և / կամ դրանց վերածումը քաղաքականության:

4.2 Դասընթացներ և հանձնարարական նյութեր

Առավելությունը կտրվի այն նախագծերին, որոնք կենտրոնացված են հետևյալի վրա.

- մտքերի, դիտարկումների և այլնի աջակցում՝ առկա և ապագա օգտագործողի պահանջների բավարարման և այդ պահանջներն առկա արդյունքներով ապահովելու համար;

- հնարավորությունների ուսումնասիրում, որի նպատակն է նախագծի արդյունքների տեղադրումը քաղաքականության մեջ, ինչպես նաև նախագծերի, ծրագրերի և քաղաքականությունների միջև կապի ստեղծման մեխանիզմների սահմանումը և ներկայացումը;
- արդյունքների ուսումնասիրության նպատակով համապատասխան ցանցերի ճանաչում, վերլուծում և կիրառում;
- արդյունքների տարածման և ուսումնասիրման լավագույն փորձ համարվող գործողությունների հաստատում:

ԳԼՈՒԽ 3. – ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳԻՐ

<u>Ժան Մոնե ծրագրի հատուկ և գործառնական նպատակները</u>

Ժան Մոնե ծրագրի հատուկ նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 35.1-ում, հետևյալն են.
(ա) խթանել ուսուցման, հետազոտման և արտացոլման գործողությունները եվրոպական ինտեգրումն ուսումնասիրելիս;
(բ) աջակցել այն հաստատությունների և ասոցիացիաների գոյությունը, որոնք կենտրոնացված են եվրոպական ինտեգրման և եվրոպական հեռանկարներով կրթության և ուսուցման հետ կապված հարցերի վրա:

Ըստ ծրագրի մասին Որոշման Հոդված 35.2-ի՝ Ժան Մոնե ծրագրի գործառնական նպատակներն են.
(ա) խթանել եվրոպական ինտեգրման ուսումնասիրության դասավանդման, հետազոտման և արտահայտման բարձր առաջադիմությունը Համայնքների սահմաններից ներս և դուրս գտնվող բուհերում;
(բ) բարձրացնել եվրոպական ինտեգրման մասին գիտելիքներն ու տեղեկացվածության աստիճանը մասնագետ գիտնականների և ընդհանրապես եվրոպական քաղաքացիների շրջանակում;
(գ) աջակցել հիմնական եվրոպական հաստատություններին, որոնք զբաղվում են եվրոպական ինտեգրմանն առնչվող հարցերով;
(դ) աջակցել բարձրորակ եվրոպական հաստատություններին և ասոցիացիաներին, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում կրթության և ուսման ոլորտում:

ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ժան Մոնե ծրագրի (ա) գործողության նպատակն է բուհերի մակարդակով (ԵՄ ներս և դուրս) խթանել ուսուցանումը, հետազոտումը և արտացոլումը եվրոպական ինտեգրման ուսումնասիրության ոլորտում: Նպատակն է գիտնականներին, ուսանողներին և աշխարհի քաղաքացիներին ապահովել եվրոպական ինտեգրմանն առնչվող հարցերի մասին գիտելիքներով և տեղեկացվածությամբ:
Առավելությունը կտրվի այն նախագծերին, որոնք վերաբերվում են հետևյալ խնդիրներին.
<u>(ա) Ժան Մոնեի նախագահություն</u>
- ուսուցման նոր գործունեության հիմնադրում, հատկապես թեկնածու երկրներում և աշխարհի մնացած մասերում;
- մինչավարտական և ավարտական մակարդակներում դասավանդումը և հետավարտական մակարդակում հետազոտությունների ապահովումը:

(բ) Ժան Մոնեի նախագահություն

- եվրոպական ինտեգրման ուսումնասիրության կանոնավոր դասավանդման կուրսերը, ինչպես նաև եվրոպական ինտեգրման գործընթացի արտահայտման կանոնավոր գործողությունների (կոնֆերանս, սեմինար, կլոր սեղաններ) կազմակերպումը:

(գ) Ժան Մոնեի եվրոպական մոդելները

- ուղղված այն ուսանողներին, ովքեր ինքնաբերաբար չեն մասնակցում եվրոպական ինտեգրման ուսումնասիրությանը (օր.՝ այնպիսի ոլորտների ուսանողները, ինչպիսիք են բժշկությունը, ինժեներությունը, գիտությունը, կրթությունը, արվեստը և լեզուները);
- ուղղված քաղաքացիներին (մեծահասկաների կրթություն) և քաղաքացիական հասարակության հատուկ խմբերին (օր.՝ տարրական և միջնակարգ դպրոցի ուսուցիչներին):

(դ) Ժան Մոնեի կենտրոնները

- իրականացնում են ակադեմիական գործունեություն, որոնք մշակում են բազմաճյուղ ռեսուրսներ;
- ցուցադրում են այն հանգամանքը, որ բաց են քաղաքացիական հասարակությանը:

(ե) Տեղեկատվական և հետազոտման գործողություններ

- ընդգրկում են անդրազգային տարածումը (իմա՝ միացյալ անդրազգային գործունեության ծավալում);
- ընդգրկում են ակադեմիական գործողություններ, որոնք մշակում են բազմաճյուղ ռեսուրսները;
- ցուցադրում են այն հանգամանքը, որ բաց են քաղաքացիական հասարակությանը:

(զ) Ժան Մոնե բազմակողմանի հետազոտման խմբերը

- նպատակ ունեն ստանալ հետազոտության այնպիսի արդյունքներ, որոնք հնարավոր չի ստանալ ազգային շրջանակներում գործունեություն ծավալելիս;
- իրականացնում են ակադեմիական գործունեություն, որոնք մշակում են բազմաճյուղ ռեսուրսներ;
- ցուցադրում են այն հանգամանքը, որ բաց են քաղաքացիական հասարակությանը: